

Մ-67

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

*Պրոֆ. Բ. Վահրամյանի
բարձրագույն և գլխավոր
ժամկետային*

ՄԻՆԱՍՅԱՆ ԼԻԼԻԹ ՈՌԲԵՐՏԻ

ԳՆԵՈՍ ՊՈՍՊԵՈՍ. ԶԻՆՎՈՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ
ԳՈՐԾԻՉԸ (ՀՈՈՍԵԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ)

Է.00.02. «Համաշխարհային պատմություն»
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության
ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2011

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Ա. Ստեփանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Ա.Լ. Քոսյան

պատմական գիտությունների թեկնածու Հ.Ջ. Մարգարյան


Առաջատար կազմակերպություն՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2011թ. դեկտեմբերի 5-ին, ժ.13.30-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում (հասցե՝ ք. Երևան, 0019, Մարշալ Բաղդասյան 24/4) գործող ԲՈՂ-ի 006 մասնագիտական խորհրդում:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում

Մեղմագիրն առաքված է 2011թ. նոյեմբերի 4-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

 պ.գ.թ. Ռոբերտ Ղազարյան

1. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն «քաղաքակրթություն» հղացքի արդի ըմբռնման՝ վերջինիս հիմնական խնդիրը համակեցական կյանքի կարևորագույն քաղաքիչների հավասարակշիռ վիճակի ապահովումն է (հոմեոստասիս): Այս պարագայում քաղաքակրթությունն ի գործ է համարժեք պատասխաններ մշակել արտաքին և ներքին մարտահրավերներին: Այն կազմակերպում է իր այլացումը ըստ կամային ճիգի և հասարակաշինական ծրագրերի: Արդյունքը քաղաքակրթական նոր տիպաբանության ձևավորումն է: Ընդունված եզրաբանությամբ՝ դա, այսպես կոչված, հատյալ քաղաքակրթությունն է (*torn civilization*)¹:

Հենց այս դիտակետից էլ փորձել ենք մեկնաբանել Հռոմի Զ. ա. II-Մ դդ. պատմության հիմնահարցերը՝ շեշտադրելով ավանդական հանրապետությունից հանրապետական միապետությանը՝ պրինցիպատին անցման գործընթացները: Դրանց առանձին շրջափուլերը (ճգնաժամ-պայքար-վերակառուցում) ունեն համապատմական բովանդակություն: Պատահական չէ, որ դրանք մեր օրերում ևս հետազոտական սևեռման առարկա են:

Սակայն, ընդհանրական միտումներին համընթաց, պատմությունը նաև առարկայական է և դիմավոր: Ասվածն առավել քան ճշմարիտ է Հռոմի կապակցությամբ: Զ. ա. II դ. սկիզբ առած քաղաքացիական համայնքի (*civitas*) և հանրապետական կարգի ճգնաժամը կյանքի կոչեց ականավոր պետական այրերի, ուլքեր մշակում և փորձարկում էին հասարակության «բշկման» իրենց ծրագրերը: Դրանք հակամետ էին և հանգեցնում էին սուր քաղաքական պայքարի, որն հաճախ ուղեկցվում էր դավադրություններով, բռնություններով, սպանություններով, հաճախ էլ վերածվում էր քաղաքացիական պատերազմի: Դիմավորված դրանք ներկայացնում էին ականավոր պետական գործիչների հետևյալ շարքը՝ Տ. Գրակոս, Գ. Գրակոս, Գ. Մարիոս, Լ. Կ. Սուլլա, Լ. Ս. Կատիլինա, Մ. Տ. Կիկերոն, Գ.ն. Պոմպեոս, Հ. Կեսար, Մ. Կրասոս, Պ. Կլոդիոս և այլք: Արդի քաղաքացիական եզրաբանությամբ՝ Հանրապետության «բշկման» նրանց ծրագրերը տատանվում էին պահպանողականությունից մինչև ամբողջավարություն, ստեղծագործ հասարակաշինությունից մինչև կաստայական անձնիշխանություն: Նպատակին հետամուտ՝ նրանք օգտագործում էին տարբեր միջոցներ՝ առհմական-ընտանեկան կապերը, հանրապետական պաշտոնները, հաղթանակած գորավարի փառքը, բանակը, ամբոխի դժգոհությունը և այլն:

Անցնելով բշկմանքի ու քաղաքացիական պատերազմների հարյուրամյա շրջափուլ (Զ. ա. 133-31 թթ.)՝ Հռոմը դրսևորեց համակեցական կամք ստեղծելու հասարակական համակեցության նոր ձև, որը համադրում էր անհամադրելի՝ հանրապետությունն ու մենիշխանությունը: Օգոստոս Օկտավիանոսի օրոք (Զ. ա. 27 - Զ. հ. 14 թթ.) կյանքի կոչվեց «հանրապետական միապետությունը»՝ պրինցիպատը՝ ապահովելով Հռոմի, իբրև համաշխարհային տերության, կենտունակությունը շուրջ երեք հարյուրամյակ: Տարբեր հանդերձանքներով այն մնաց համաշխարհային պատմության մեջ: Նոր պատմության արշալույսին, օրինակ, ներկայացավ «լուսավորյալ միապետության» հանդերձանքով:

¹ S. Huntington, The Clash of Civilizations and Remaking of World Order, New York, 1996, pp. 138-143.

Ատենախոսությունում այս բոլոր գործընթացները դիմավորել են և հնարավորինս «չափել» խոշոր անհատականությունների «ներուճակոտային գործակիցը»: Նման հետազոտական մոտեցմամբ զգալիորեն փոխվել են Բ. ա. I դ. կեսի Հռոմի պատմության երանգները: Առաջին պլան են մղվել գործիչներ, որոնց դերակատարությունն ավանդաբար «նվազեցվել է»: Ասվածն առաջին հերթին վերաբերում է Գնենո Պոմպեոսին (Բ. ա. 106-49 թթ.): Նրա անցած ուղին աննախադեպ էր անգամ Հռոմի պատմության մեջ՝ ռազմական փառք, քաղաքական իշխանություն, անասհման հեղինակություն: Դրան գումարած կամք ու ինքնատիրապետություն: Այս ամենը հանգեցրեց անուրանալի հաջողությունների հռոմեական տերության տարբեր ծագերում՝ Իսպանիա, Միջերկրածովք, Արևելք և, հատկապես, բուն Հռոմում:

Պոմպեոսի գործունեության որակապես նոր շրջափուլ կազմեցին Բ. ա. 60-50-ական թթ.: Բ. ա. 62 թ. հաղթանակած բանակով վերադառնալով Արևելքից, գտնվելով փառքի և հզորության գագաթնակետին, նա չփորձեց բռնազավթել իշխանությունը: Սուլլայի փորձով համոզված էր, որ ռազմական դիկտատուրան Հռոմում հեռանկար չունի: Մշակեց իր, այսպես կոչված, «նոր ընտրության» քաղաքական կուրսը, որի նպատակն էր՝ գործել անհատականության շուրջ վերամիավորել հռոմեական հանրույթը՝ մենիշխանության և հանրապետական կարգի հավասարակշիռ համադրելիությամբ: Այս արդյունական գաղափարը տեսականորեն հիմնավորեց Մ. Տ. Կիկերոնն իր «Հանրապետության մասին» քննախոսության ծիրում:

Բ. ա. 60-50-ական թթ. ներքաղաքական կատաղի վայրիվերումների ընթացքում Պոմպեոսն ընտրեց իր նպատակին հասնելու հանգրվանային ուղին՝ գնալ ժամանակավոր զիջումների՝ չմոռանալով ռազմավարական կարևորագույն նպատակը: Նման զիջումներից էր Առաջին եռապետությունը (Բ. ա. 60 թ.)՝ Գն. Պոմպեոսի, Հ. Կեսարի և Մ. Կրասոսի ոչ պաշտոնական դաշինքը:

Հռոմում թև առած անիշխանության պայմաններում, գործելով զուլվածությամբ և (երբեմն անակգրունբայնությունը սահմանակցող) ճկունությամբ, Պոմպեոսը Բ. ա. 52 թ. հասավ իր նպատակին: Նա ընտրվեց *կոնսուլ առանց պաշտոնակցի* (*consul sine collega*): Հանրապետության պատմության մեջ նման հաստատություն երբևէ չէր եղել: Հանձինս դրա իրական կերպարանք ստացավ հանրապետության և մենիշխանության համադրելիությունը: Մենք դա դիտարկում ենք իբրև պրինցիպատի նախադեպ, իսկ Պոմպեոսին՝ հանրապետական կարգի ճգնաժամի հաղթահարման այս հարացույցի նախակարապետ: Սակայն Պոմպեոսը չհասավ վերջնական հաջողության, քանզի «մոռացել էր» հռոմեական պլեբսին: Այդ բացը վիճակված էր լրացնելու Օգոստոսին, պատմության դաս, որն արդիական է առ այսօր:

2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

Հետազոտության օբյեկտը մի կողմից Բ. ա. II-I դդ. հռոմեական հանրապետական կարգի ճգնաժամը և դրան ուղեկցող խորագույն ընկերային ցնցումներն են, մյուս կողմից՝ ականավոր պետական այրերի և նրանց գաղափարակիցների կողմից հասարակական «բժշկման» հարացույցների մշակումն ու կիրարկումը: Դրանք ավարտվեցին համակեցական նոր համակարգի՝ պրինցիպատի հաստատմամբ:

Հետազոտության առարկան հռոմեական պետական և ռազմական գործիչ Գնենո Պոմպեոսի կյանքն ու գործունեությունն է՝ իբրև իր փորձից զարաշրջանի կիզակետ, որն ուներ աներկբա հասարակաշինական լիցք, քանզի միտված էր նոր հեռանկարներ գծելու հռոմեական համակեցության համար:

Պոմպեոսի հասարակաշինական ծրագիրը գործառու էր համընթաց այլ ծրագրերի, որոնք ներկայացնում էին Հ. Կեսարը, Մ. Կրասոսը, Կատոն Կրտսերը, Պ. Կրոդիոսը և այլք: Նրանց փոխազդեցությունը նույնպես մեր հետազոտության առարկան է: Հարկ ենք համարում նույնը հատկանշել նաև Մ. Տ. Կիկերոնի ստեղծագործությունների վերաբերյալ, քանզի որ մեր գիտաբեման ունի նաև տեսական դիտանկյուն:

3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակը պրինցիպատի կայացման գործում ականավոր պետական, ռազմական գործիչ Գնենո Պոմպեոսի դերակատարության լուսաբանությունն է Հռոմի՝ Բ. ա. II-I դդ. բարդ ու հակասական պատմության համատեքստում:

Ըստ այդմ առաջադրվել են հետևյալ հետազոտական խնդիրները:

- Տիպաբանական վերլուծության ենթարկել Բ. ա. II դ. սկզբից Հռոմի համակեցական կյանքի հիմնարար քաղաքիչների խեղումը և ճգնաժամը:

- Ներկայացնել խոշոր պետական այրերի և նրանց սատարող քաղաքական ուժերի «հանրապետության բժշկման» հարացույցները և դրանց շուրջ ծավալված պայքարը:

- Բնության ենթարկել Պոմպեոսի ռազմաքաղաքական առաջընթացի նախափուլը (Բ. ա. 80-ական թթ. – 60-ական թթ. սկիզբ)՝ որպես նախադեպ շունեցող արտակարգ իրավասությունների շրթա:

- Լուսաբանել Պոմպեոսի Արևելյան արշավանքն իբրև նրա փառքի, հզորության և հեղինակության կայացման շրջափուլ՝ կենտրոնանալով նրա ձևավորած հռոմեական տիրապետության համակարգի (*Pax Romana*) կառուցվածքի վրա:

- Բ. ա. 60-50-ական թթ. հանրապետական կարգի ահագնացող ճգնաժամի համատեքստում քննության ենթարկել Պոմպեոսի «նոր ընտրության» ուղու էությունը:

- Վերլուծության ենթարկել «Նոր Հռոմի» հարացույցի տեսական մշակումը և գաղափարախոսական հիմնավորումը Կիկերոնի «Հանրապետության մասին» (*De Re Publica*) քննախոսությունում:

- Տարաբնույթ քաղաքական ուժերի դիմադրության հետնախորքի վրա լուսաբանել Պոմպեոսի «հանգրվանային ուղին». զիջումներ ընթացիկ հարցերում՝ հիմնարար նպատակների իրագործման ճանապարհին:

- Սեկնարկելով հռոմեական համակեցության կարևոր հաստատություններից մեկից՝ *դաշնությունից* (*societas*), բացահայտել Առաջին եռապետության կառույցն ու բովանդակությունը: Լուսաբանել դրա անդամների (Պոմպեոս, Կեսար, Կրասոս) նպատակներն ու մարտավարությունը:

- Ներկայացնել Բ. ա. 50-ական թթ. երկրորդ կեսի քառսի վերածված ճգնաժամը: Համեմատական քննության ենթարկել այդ պայմաններում շրջանառության մեջ դրված ճգնաժամի հաղթահարման հարացույցների իրավական հիմքերը և այդ տեսանկյունից մեկնաբանել Բ. ա. 52 թ. Պոմպեոսի *կոնսուլ առանց պաշտոնակցի* (*consul sine collega*) կարգավիճակն իբրև պրինցիպատի նախադեպ:

- Բնության ենթարկել «Պոմպեոս-Կեսար» հակամարտության խորքային բովանդակությունը՝ «սահմանադրական ժամանակակից» շաղախված նորարարություն և «ռազմական անհեռանկարությամբ» շաղախված պահպանողականություն: Բացահայտել դրանց բախման քաղաքակրթական հեռանկարը և առնչությունը պրինցիպատի կայացման գործընթացին:

4. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

- Ատենախոսությունը մեզանում առաջին փորձն է համակարգային վերլուծության ենթարկելու Ք. ա. II-I դդ. հանրապետական կարգի ճգնաժամը Հռոմում և դրա հարթահարման տարբեր հարաբերությունների շուրջ ծավալված պայքարը:

- Բայլ է կատարված քաղաքակրթական ըմբռնումների դիտակետներից բացահայտելու «հանրապետական միապետություն» հղացքի տեսական և գործնական հիմքերը, իրողություն, որը հնարավորություն է պարունակում պրինցիպատը ներկայացնելու համապատմական գուգահեռների վրա:

- Հետազոտական սևեռումի խնդիրներ են դարձել Գ.նեոս Պոմպեոսի անձը և ռազմավարչական գործունեությունը: Փորձ է կատարվել Հռոմի պատմությունը հարակարգել ըստ Պոմպեոսի կյանքի կարևորագույն հանգրվանների՝ Սուլլայի դիկտատուրայի ժամանակաշրջան, Իսպանիա, Միջերկրածովք, Արևելք: Հատկապես շեշտադրվել է նրա մասնակցությունը Ք. ա. 50-ականների ներքոնեոսական կյանքի վայրիվերումներին՝ իր «նոր ընտրության» քաղաքական ծրագրով:

- Պարզաբանվել է «նոր ընտրության» ծրագրի իմաստն ու բովանդակությունը, ներկայացվել են դրա տեսական և գործնական մշակման շրջափուլերը: Հատուկ սևեռումի է ենթարկվել «Պոմպեոս-Կիկերոն» ստեղծագործական համագործակցությունը: Վերլուծվել են Կիկերոնի քաղաքագիտական հայացքներն իբրև ապագա պրինցիպատի տեսական հիմնավորում:

- Իրավագիտական վերլուծության է ենթարկվել Ք. ա. 52 թ. *consul sine collega* կարգավիճակը, ցույց է տրվել դրա անմիջական կապը «հանրապետական միապետության» հետ: Այդ հիմամբ բացահայտվել են Պոմպեոսի ու Կեսարի հասարակաշինական ծրագրերի արմատական տարբերությունները:

- Հարդյունս այս բոլորի՝ Պոմպեոսը ճանաչվել է իբրև պրինցիպատի համակարգի իրական «հայրերից» մեկը: Եշմարտության դեմ չմեղանչելու համար հարկ ենք համարում նշել, որ նման վարկած առաջ է քաշվել դեռևս XX դ. սկզբի նշանավոր հետազոտող Էդ. Մայերի կողմից, սակայն առանց էական հիմնավորման: Գաղափարի աղբյուրագիտական, պատմական և քաղաքակրթական հիմնավորումը մեր ատենախոսության գիտական նորույթն է:

5. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ատենախոսության ժամանակագրական սահմաններն են Ք. ա. II-I դդ.: Մասնավորապես, կանգ ենք առել Ք. ա. I դ. կեսի՝ Հռոմի համար ճակատագրական պատմական անցքերի վրա: Ուսումնասիրության տրամաբանության թելադրանքով անդրադարձել ենք նաև Հռոմի պատմության ավելի վաղ և ուշ շրջափուլերին:

6. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Հռոմի պատմության ուսումնասիրվող դարաշրջանի կարևորագույն իրողությունները հնարավորինս ամբողջական ընկալելու մտահոգությամբ՝ օգտագործել ենք հետազոտական տարբեր ըմբռնումներ և մեթոդներ: Ավանդական պատմաբնականի և պատմահամեմատականի շնորհիվ վերհանել և հարակարգել ենք հետազոտական ընդարձակ նյութը: Դրա առանձին քաղադրիչների իմաստային դաշտերը հստակեցնե-

լու և համարժեք մեկնաբանելու համար մեկնարկել ենք միջկրթանքային (*interdisciplinary*) համաբերման մեթոդից՝ պատմություն-բանասիրություն, պատմություն-քաղաքագիտություն, պատմություն-միջազգային հարաբերություններ, պատմություն-իրավունք և այլն: Ստացված արդյունքներն աշխատել ենք համաբերել քաղաքակրթական ըմբռնումների շրջանակում:

7. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել առաջադրված հիմնախնդիրների հետագա ակադեմիական ուսումնասիրությունների համար ինչպես Հռոմի, այնպես էլ քաղաքակրթությունների համեմատական պատմության պարագծում: Դրանք կարող են հետաքրքրություն ներկայացնել նաև քաղաքագիտական, միջազգային հարաբերությունների, իրավական առանձին խնդիրների լուսաբանման համար:

Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել գիտակրթական բնագավառում՝ «Ամտիկ պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Հասարակական մտքի պատմություն», «Քաղաքակրթությունների տեսություն և պատմություն» բուհական ընդհանուր և մասնագիտական դասընթացների մշակման գործում:

8. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ Պատմության ֆակուլտետի խորհրդում: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Համաշխարհային պատմության ամբիոնի նիստում: Ատենախոսության հիմնադրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են հեղինակի չորս գիտական հոդվածներում:

9. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԿՁԲՆԱԳՔՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՀՅՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՈՒՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունը կատարվել է՝ բազմաբնույթ սկզբնաղբյուրների և գիտական հետազոտությունների հիման վրա: Դրանք նպատակահարմար ենք համարում ներկայացնել ըստ խմբերի:

Սկզբնաղբյուրները բաժանել ենք հետևյալ խմբերի: Առաջին՝ անտիկ պատմագրություն: Պարառում է գործեր՝ հեղինակված ինչպես դեպքերի ականատեսների, այնպես էլ հետագա պատմիչների կողմից:

Ականատեսների ենթադասի պատմիչներից ցանկանում ենք նախատառջ նշել Պոլիբիոսին (Ք. ա. 200-120 թթ.), ում «Համընդհանուր պատմությունը» ի մի է բերել Հռոմի Ք. ա. III-II դդ. պատմության կարևորագույն իրադարձությունները²:

Ք. ա. I դ. պատմական իրադարձությունների համար արժանահավատ սկզբնաղբյուրներ են Գայոս Սալլուստիոս Կրիսպոսի (Ք. ա. 86-35 թթ.) աշխատությունները՝ «Կատիլիանայի դավադրությունը», «Յուգուրթական պատերազմը» և

² Polybius, *Historiae*, In 6 Vol., With an Engl. Transl. by W. R. Paton. The Loeb Classical Library, Cambridge (MA), 1960.

«Պատմությունը»³: Դրանց գլխավոր բեման հռոմեական հանրապետության ճգնաժամն է, հասարակության քաղաքական և բարոյական անկումը:

Ք. ա. 50-40-ականների ուսումնասիրության համար կարևոր են նաև Գայոս Հուլիոս Կեսարի ստեղծագործությունները՝ «Նոթեր Գալլական պատերազմի մասին» և «Նոթեր Քաղաքացիական պատերազմի մասին»⁴: Դրանք փաստաառատ են, սակայն կողմնակալ, արտահայտում են դեպքերի կեսարյան զնահատումը:

Հետագա պատմիչների ենթադրաբար կարևորագույն սկզբնաղբյուր է Տիտոս Լիվիոսի (Ք. ա. 59 - Ք. հ. 17 թթ.) «Հռոմի պատմությունը Քաղաքի հիմնադրումից ի վեր» աշխատությունը⁵: 140 գրքից ամբողջությամբ պահպանվել են միայն 35-ը. մնացածները, այդ թվում՝ մեր գիտաբեմայի դարաշրջանն ընդգրկողները միայն հակիրճանքների տեսքով են:

Դիոն Կասիոս Կոկլեանոսի (163/164-235 թթ.) «Հռոմի պատմությունը» բաղկացած է 80 գրքից⁶: Այդ դարաշրջանում կրկին արդիական էր խոշոր անհատականության կողմից «հասարակության բժշկման» գաղափարը, ինչով պայմանավորված է նրա հետաքրքրությունը Ք. ա. 60-50-ականների իրադարձությունների հանդեպ: Օգտվել է Սենատի դիվանից և Տ. Լիվիոսից:

Ատենախոսությունը գրելիս օգտագործել ենք նաև Պոմպեոս Տրոգոսի, Վելլետո Պատերկուլոսի, Հոլսեյուս Փլաբիոսի, Ապիանոսի, Ֆլորոսի և այլ պատմիչների գործեր:

Սկզբնաղբյուրների երկրորդ խումբը իմաստասիրական և ճարտասանական ստեղծագործություններն են: Այս խմբի կարևորագույն ներկայացուցիչը Մ. Տ. Կիկերոնն է (Ք. ա. 106 - 43 թթ.): Մեր գիտաբեմայի դիտանկյունից մեծ արժեք ունեն նրա հատկապես երկու քննախոսությունները՝ «Հանրապետության մասին» և «Օրենքների մասին»⁷: Կարևոր են նաև հեղինակի բազում դատական և հրապարակային ճառերը, որոնց անդրադարձել ենք ի տեղի:

Սկզբնաղբյուրների երրորդ խումբը կազմում են մամակագրությունը և բարոյագիտական բնույթի աշխատությունները: Գիտաբեմային առնչվող քաղաքական, իրավական, աշխարհատեսական տարբեր հարցերի հետ կապված անդրադարձել ենք Կիկերոնի բազմաթիվ մամակներին՝ ուղղված եղբորը՝ Զվինտոսին, և ընտանիքին⁸: Բարոյագիտական ժանրն ատենախոսության մեջ ներկայացված է Պլուտարքոսի (40-120 թթ.) «Ձուգակշիռով»⁹: Բնաստատերը խնդիր է դրել բացահայտելու Հունաստանի

և Հռոմի պատմության հիմնախնդիրները՝ մեկնաբանելով ակնավոր այբերի հոգեկերտվածքի առանձնահատկություններից: Մեր գիտաբեմայի դիտանկյունից արժեքավոր են նրա Կ. Սուլլայի, Լ. Լուկուլլոսի, Մ. Կրասոսի, Հ. Կեսարի, Մ. Կիկերոնի, Կատոն Կրաստերի և (հատկապես) Գնեոս Պոմպեոսի կենսագրությունները:

Գիտական հետազոտությունները նույնպես բաժանել ենք առանձին խմբերի: Առաջին խումբը ներառում է Հռոմի և, մասնավորապես, ուշ հանրապետության պատմությանը, հանրապետական կարգի ճգնաժամին վերաբերող ընդհանուր բնույթի աշխատությունները: Դրանք շատ են, առանձնացնում ենք միայն ամենակարևորները, որոնց հեղինակներն են՝ Թ. Մոմզենը, Մ. Գեյցերը, Ռ. Սայմը, Հ. Սքալարդը, Փ. Բրանթը, Է. Գրունը, Ս. Ուաշենկոն, Ա. Եգորովը, Ն. Տրուխիան և այլք¹⁰:

Երկրորդ խումբը ներառում է Հռոմի պատմության Ք. ա. II-I դդ. նվիրված այն հետազոտությունները, որոնք առնչվում են մեր գիտաբեմայի մասնակի (բայց հույժ կարևոր) հիմնախնդիրներին՝ ընկերային, իշխանական, իրավական, կրոնական, մշակութային կերպափոխություններին: Այս կապակցությամբ հատկանշելի են Ա. Բոակի, Վ. Էրենբերգի, Ռ. Ռիդլի, Ն. Մաշկինի, Ե. Շտաերմանի հոդվածներն ու մենագրությունները¹¹:

Երրորդ խումբը ներառում է այն հետազոտությունները, որոնք նպատակ ունեն դիմավորելու (անհատականացնելու) ուսումնասիրվող դարաշրջանի բարդ և հակասական պատմությունը: Այս մեթոդը եզրաբանվում է իբրև պրոտոպոզաֆիկ հետազոտական եղանակ, քանզի նվիրված է ակնավոր պետական այբերի՝ Լ. Կ. Սուլլայի, Մ. Տ. Կիկերոնի, Հ. Կեսարի և այլոց կյանքին ու գործունեությանը: Հեղինակները տարբեր հետազոտական փորձառություն ունեն՝ Ռ. Սայմ, Գ. Սթոլտոն, Ֆ. Ինար, Ս. Ուաշենկո և այլք¹², ուստի նրանց գործերը տարբերվում են ինչպես աղբյուրագիտական հիմնավորմամբ, այնպես էլ ընդգրկման խորությամբ:

Չորրորդ խմբում առանձնացրել ենք Գնեոս Պոմպեոսի ռազմավարչական գործունեությանը նվիրված հետազոտությունները: Ի շարս դրանց կարևորում ենք այն մենագրությունները, որոնք հեղինակել են Է. Մայերը, Մ. Գեյցերը, Ռ. Սիջերը, Ջ. Լիչը,

¹⁰ Т. Моммзен, История Рима, в 4-х т., М., 1939-1949; М. Gelzer, The Roman Nobility, Oxford, 1969; R. Syme, The Roman Revolution, Oxford, 1939; H. H. Scullard, From the Gracchi to Nero (A History of Rome 133 BC-AD68), London, 1964; P. Brunt, The Fall of the Roman Republic and Related Essays, Oxford, 1988; E. Gruen, The Last Generation of Roman Republic, Berkeley, 1995; С. Л. Утченко, Идеино-политическая борьба в Риме накануне падения Республики (из истории политических идей), М., 1952; Утчин, Кризис и падение Римской Республики, М., 1965; А. Б. Егоров, Рим на грани эпох, Л., 1985; Н. Н. Трухина, Политика и политики "золотого века" Римской республики (II в. до н. э.), М., 1986.

¹¹ A. E. R. Boak, The Extraordinary Commands from 80 to 48 B. C.: A Study in the Origins of Principate, American Historical Review, 24 (1918), pp. 1-25; V. Ehrenberg, Imperium Maius in the Roman Republic, American Journal of Philology, 74 (1953), pp. 113-136; R. T. Redley, The Extraordinary Commands of the Late Republic. A Matter of Definition, Historia, 30 (1981), pp. 280-297; Н. Машкин, Римские политические партии в конце II и в начале I в. до н. э., ВДИ, 3 (1947), с. 126-139; Е. Штаерман, От гражданина к подданному, в кн. Культура Древнего Рима, т. I, Москва, 1985, с. 22-105.

¹² D. Stockton, Cicero: A Political Biography, Oxford, 1971; Ф. Инар, Сулла, Ростов-на-Дону, 1997; С. Л. Утченко, Цицерон и его время, М., 1973; Утчин, Юлий Цезарь, М., 1984.

³ Sallustius Gaius Crispus, Opera, With an Engl. Transl. by J. C. Rolfe, The Loeb Classical Library, Cambridge (MA), 1960.

⁴ Gaius Julius Caesar, Commentarii de Bello Civillii, With an Engl. Transl. by A. D. Peskett, The Loeb Classical Library, Cambridge (MA), 1957; Նույնի, Commentarii de Bello Gallico, With an Engl. Transl. by H. J. Edwards, The Loeb Classical Library, Cambridge (MA), 1958.

⁵ Titus Livius, Ab Urbe Condita, in 14 Vol., With an Engl. Transl. by A. C. Schlesinger, The Loeb Classical Library, Cambridge (MA), 1949-1961.

⁶ Dio Cassius Cocceianus, Historia Romana, In 9 Vol., With an Engl. Transl. by E. Cary, The Loeb Classical Library, Cambridge (MA), 1954-1960.

⁷ Cicero Marcus Tullius, De Re Publica, De Legibus, With an Engl. Transl. by C. W. Keyes, The Loeb Classical Library, Cambridge (MA), 1959.

⁸ Cicero Marcus Tullius, Epistulae ad Familiaries, In 3 Vol., With an Engl. Transl. by W. G. Williams, The Loeb Classical Library, Cambridge (MA), 1958-1960.

⁹ Plutarchus, Vitae, In 11 Vol., With an Engl. Transl. by B. Parrin, The Loeb Classical Library, Cambridge (MA), 1949-1959.

Պ. Գրինհալֆը և Պ. Սաուրերնը¹³: Այս խմբում ներառել ենք նաև Պոմպեոսի գործունեության առանձին շրջափուլերի և իրադարձությունների, այլ հասարակական-քաղաքական գործիչների հետ նրա փոխհարաբերությունների վերաբերյալ բազմաթիվ հոդվածները¹⁴:

Հինգերորդ խմբում համաբերել ենք այն մեկագործություններն ու հոդվածները, որոնք օգտագործել ենք Գնեսու Պոմպեոսի Արևելյան արշավանքների և վարչական գործունեության լուսարանման համար:

Ցանկանում ենք հատկանշել Հռոմի արտաքին քաղաքականության վերաբերյալ կարևորագույն աշխատությունները՝ հեղինակված Է. Մաթեիի, Է. Բեդինի, Ա. Շերվին-Ուայթի, Է. Գրուրնի, Ա. Լինտոտի կողմից¹⁵: Նրանք սկսեցին «հռոմեական իմպերիալիզմը» դիտարկել դարաշրջանի իրավական պատկերացումների տեսանկյունից, և արդյունքները տարածվեցին Հռոմի արևելյան քաղաքականության վրա:

Այս խմբում ընդգրկել ենք նաև առանձին տարածաշրջաններում Հռոմի ներքափանցումը ներկայացնող ուսումնասիրություններ՝ Փոքր Ասիա (Դ. Մեյջի, Ա. Շերվին-Ուայթ), Պոնտական թագավորություն (Թ. Ուեյնակ, Վ. Ուոլիսոն, Ու. Ֆլետչեր), Ատրիք (Ա. Բեյլինգեր, Ս. Դաունի, Դ. Գրեյնջեր), Հուդա (Ռ. Սմոլվուդ), Նաբաթեա (Ջ. Բաուներսոլ), Պարթևստան (Ն. Դիլվաուզ, Ա. Կիվենի, Ա. Բոկչյանին, Մ. Դյակոնով)¹⁶,

որոնց շնորհիվ Հռոմի ներքափանցումն Արևելք ներկայանում է իբրև բազմաբաշխ գործընթաց, երբ միմյանց համադրվում էին տարբեր քաղաքակրթական միավորներ՝ իրենց համակեցական, կրոնական, մշակութային արժեքներով:

Նույն տեղաշարժերը նկատելի են Հռոմի և Մեծ Հայքի հարաբերությունների ուսումնասիրության բնագավառում: Այստեղ խոշոր ներդրում ունեն Հ. Աստուրեանը, Հ. Մանանդյանը, Ն. Ադոնցը և Գ. Սարգսյանը¹⁷, որոնք հավաքել, համակարգել և մեկնաբանել են աղբյուրագիտական պատկանելի նյութ: Մշակել են պատմագիտական հոդաքներ, որոնք դրապաշտական բովանդակություն ունեն, այսինքն՝ հիմնական ուշադրությունը սեռում են քաղաքական և իրադարձութենական պատմության վրա:

Միայն վերջին տասնամյակներին պատկերն էականորեն փոխվել է: Հայ-հռոմեական հարաբերությունները սկսել են ուսումնասիրվել ժամանակաշրջանի ընկերային, քաղաքական կառույցների, աշխարհատեսության, միջազգային իրավունքի դիտանկյունից: Այս առումով հույժ գնահատելի են Ռ. Մանասերյանի¹⁸ և Ա. Ստեփանյանի¹⁹ հետազոտությունները: Հավելենք, որ վերջին շրջանում Ա. Ստեփանյանը քայլեր է ձեռնարկել հելլենիստական Մեծ Հայքի պատմության քաղաքակրթական մեկնաբանության ուղղությամբ:

Կցանկանայինք կարևորել նաև Բ. Հարությունյանի ուսումնասիրությունները՝ միտված Տիգրան II-ի ստեղծած Հայոց տերության տարածքային ընդգրկման, աշխարհագրական սահմանների ճշգրտմանը²⁰:

¹³ Ed. Meyer, *Caesars Monarchie und das Prinzipat des Pompeius. Innere Geschichte Roms vom 66 bis 44* (3e Auflage), Stuttgart/ Berlin, 1922; M. Gelzer, *Pompeius*, Munich, 1959; R. Seager, *Pompey: A Political Biography*, Oxford, 1979; J. Leach, *Pompey the Great*, London, 1978, P. Greenhalgh, *Pompey: the Roman Alexander*, London, 1980; Նույնի, *Pompey: the Republican Prince*, London, 1981; P. Southern, *Pompey the Great*, Great Britain, 2002.

¹⁴ E. Gruen, *Pompey, Metellus Pius, and the Trials of 70-69 B.C.: The Perils of Schematism*, *American Journal of Philology*, 92 (1971), pp. 1-16; Նույնի, *Pompey, The Roman Aristocracy and the Conference of Luca*, *Historia*, 18 (1969), pp. 71-108; C. Luibheid, *The Luca Conference*, *Classical Philology*, 65 (1970), pp. 88-94; E. Parrish, *Crassus' New Friends and Pompey's Return*, *Phoenix*, 27 (1973), pp. 357-380; A. Lintott, *P. Clodius Pulcher - "Felix Catilina?"*, *Greece and Rome*, 2nd Ser., 14 (1967), pp. 157-169; A. Ward, *The Early Relationships Between Cicero and Pompey until 80 B. C.*, *Phoenix* 24 (1970), pp. 119-129; Նույնի, *Cicero and Pompey in 75 and 70 B. C.*, *Latomus*, 29 (1970) 58-71; W. Anderson, *Pompey, His Friends and the Literature of First Century B. C.*, *Berkley*, 1963, pp. 1-88.

¹⁵ L. E. Matthaëi, *On the Classification of Roman Allies*, *Classical Quarterly*, 1 (1907), pp. 182-204; E. Badian, *Foreign Clientelae*, Oxford, 1958; Նույնի, *Roman Imperialism in the Late Republic*, New York, 1968; A. N. Sherwin-White, *Roman Foreign Policy in the East, 168 B.C. to A.D. 1*, London, 1984; E. Gruen, *The Hellenistic World and The Coming of Rome*, Vol. 1; *Berkley*, Los Angeles, London, 1984; A. Lintott, *Imperium Romanum. Politics and Administration*; London and New York, 1993.

¹⁶ D. Magie, *Roman Rule in Asia Minor, to the End of the Third Century After Christ*, v. I, Princeton, 1950; A. N. Sherwin-White, *Rome, Pamphylia and Cilicia, 133-70 B. C.*, *Journal of Roman Studies*, 66 (1976), pp. 1-14; Նույնի, *Roman Involvement in Anatolia, 167-88 B.C.*, *Journal of Roman Studies*, 67 (1977), pp. 62-75; W. G. Fletcher, *The Pontic Cities of Pompey the Great*, *Transactions and Proceedings of the American Philological Association*, 70 (1939), pp. 17-29; Th. Reinach, *Mithridate Eupator, Roi de Pont*, Paris, 1890; N. W. Z. Robisohn, *Mithradates VI Eupator Dionysos and Rome's Conquest of the Hellenistic East*, *Mediterranean Historical Review*, 8 (1953), pp. 5-54; A. R. Belinger, *The End of the Seleucids*, *Transactions of the Connecticut Academy of Arts and Sciences*, 38 (1949), pp. 51-102; C. Downey, *A History of Antioch in Syria (from Seleucus to the Arab Conquest)*,

Princeton, 1961; J. D. Grainger, *The Cities of Seleukid Syria*, Oxford, Clarendon Press, 1990; G. W. Bowersock, *Roman Arabia*, Cambridge (MA), 1983; R. M. Smallwood, *The Jews Under Roman Rule, From Pompey to Diocletian*, Leiden, 1976; C. Debevoise, *A Political History of Parthia*, New York, 1968; A. Keaveney, *Roman Threties With Parthia circa 95-circa 64 B. C.*, *American Journal of Philology*, 2 (1981), pp. 195-212; A. Г. Бокщанин, *Парфия и Рим*, ч. 2, М., 1966; М. М. Дьяконов, *Очерк истории Древнего Ирана*, М., 1961.

¹⁷ Հ. Աստուրյան, *Քաղաքական վերաբերություններ ընդ մեջ Հայաստանի և Հռոմայ, Վենետիկ, 1912*; Հ. Մանանդյան, *Տիգրան Երկրորդը և Հռոմը*, Ե., 1940; Նույնի, *Круговой путь Помпея в Закавказье*, *Вестник Древней Истории*, 4 (1939), с. 70-81, *Маршруты Понтийского похода Помпея и путь отступления Митридата в Колхиду*, *Вестник Древней Истории*, 3-4 (1940), с. 82-97, Ն. Ադոնց, *Հայաստանը Տիգրան II Մեծի գահակալության ժամանակաշրջանում*, *Երկեր*, հ. 4, Ե., 2009, էջ 456-512; Գ. Սարգսյան, *Հայկական աշխարհայալ տերությունը: Տիգրան Բ, Հայ ժողովրդի պատմություն*, հ.1, Ե., 1971, էջ 558-565:

¹⁸ Ռ. Մանասերյան, *Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ*, Ե., 1987; Նույնի, *Процесс образования державы Тиграна II*, *Вестник Древней Истории*, 2 (1982), сс. 122-139; *Международные отношения на Переднем Востоке в 80-70-х годах до н. э.*, *Вестник Древней Истории*, 1 (1992), сс. 152-160

¹⁹ Ա. Ստեփանյան, *Քաղաքակրթական հավասարակշռության հիմնախնդիրը Մեծ Հայքում, Մաս առաջին, Ներհանրութային հոմոսոստասիս հաստատումը. Արտաշես I, ՎԷՄ, 3 (2009), էջ 35-55; Մաս երկրորդ, Արտասիսորութային քաղաքակրթական հոմոսոստասիսը. Տիգրան II, ՎԷՄ, 1 (2010), էջ 29-66; Նույնի, *К интерпретации страбоновой версии истории Армении*, *Историко-филологический журнал*, 3 (1980), с. 251-267; Նույնի, *К государственной политике царя Артавазда II*, *Историко-филологический журнал*, 2 (1989), с. 40-54; Նույնի, *Развитие исторической мысли в Древней Армении*, Եր., 1991.*

²⁰ Բ. Հարությունյան, *Տիգրան Մեծի տերությունը, Տիգրան Մեծի գահակալության 2100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու* (2005), Երևան, 2011, էջ 26-33:

10. ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից:

Ներածությունում հիմնավորված է բենալի արդիականությունը, տրված է օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության տեսություն:

Առաջին գլուխը՝ «Համակեցական կյանքի կերպափոխությունները Հռոմում (Ք. ա. II-I դդ.)», բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Քարեփոխիչների և պահպանողականների հակամարտությունը», տիպաբանական վերլուծության է ենթարկվում Ք. ա. II-I դդ. Հռոմի համակեցական կյանքի հիմնարար բաղադրիչների կերպափոխությունը, խեղումը և արդյունքում ծավալված խոր և համընդգրկուն ճգնաժամը: Այն հիմնականում պայմանավորված էր նորաստեղծ Հռոմեական աշխարհակալ տերության և Հռոմի՝ որպես քաղաքացիական համայնքի (*civitas*) անհամապատասխանությամբ:

Ներկայացված են ճգնաժամը հարթահարելու մտայնությամբ խոշոր պետական այրերի և նրանց աստարող հասարակական-քաղաքական ուժերի որդեգրած «հանրապետության բժշկման» տարբեր հարացույցները և դրանց իրագործման համար ծավալված պայքարը՝ սկսած «Սկիպիոն Ափրիկացի - Կատոն Ավագ» հակամարտությունից մինչև Սուլլայի ռազմական դիկտատուրա (Ք. ա. 82-79 թթ.): Դրանք ուղեկցվում էին բռնություններով, դավադրություններով, արյունահեղություններով, քաղաքացիական պատերազմներով՝ գումարած նաև խտալական դաշնակիցների դեմ պատերազմը և ստրուկների ապստամբությունները:

Այդ ընթացքում հստակորեն նկատվեց հետևյալ միտումը. խոշոր անհատականությունները Հանրապետության վերականգնման կարգախոսի ներքո օգտագործում էին բոլոր միջոցները (տոհմական-ընտանեկան կապեր, հանրապետական պաշտոններ, հաղթանակած զորավարի փառք, բանակ) անձնական իշխանության բացարձականացման համար և իրենց դուրս էին դնում Հանրապետությունից: Ամենաձայրահեղն ու արմատականը Սուլլան էր, ով փորձեց հաստատել ռազմական բռնապետություն (դիկտատուրա): Բայց շուտով ի հայտ դարձավ այդ գաղափարի փակուղայնությունը: Հռոմում գորեղ էին հանրապետական ավանդույթները:

Երկրորդ ենթագլխում՝ «Գնես Պոմպեոսի քաղաքական գործունեության առաջին շրջափուլը (Ք. ա. 70-ական թթ.)», ներկայացվում է Գն. Պոմպեոսի քաղաքական առաջընթացը Ք. ա. 70-ական թթ.: Այն Հանրապետության պատմության մեջ նախադեպը չունեցող արտակարգ իրավասությունների շրջա է: Քաղաքական ասպարեզ մուտք գործելով իբրև Սուլլայի զինակից՝ Ք. ա. 80-70-ական թթ., շրջանցելով պաշտոնավարման սահմանված կարգը (*cursus honorum*), Գնես Պոմպեոսը Մենտից ստացավ մի շարք արտակարգ ռազմական իրավասություններ (Ք. ա. 80-70-ական թթ.)՝ ճնշելու հակասուլլայական ուժերի դիմադրությունը Սիկիլիայում, Ափրիկայում, Իսպանիայում: Իրեն դրսևորեց որպես տաղանդավոր զորավար՝ արժանանալով «Մեծ» պատվանվանը և կրկին, հակառակ սահմանված կարգի, հաղթահանվողների: Տեղական բնակչության նկատմամբ զորավարի գուսպ և արդարադատ վերաբերմունքը նպաստեց նշյալ տարածաշրջաններում Գնես Պոմպեոսի հետ անձնական «հավատարմության» հարաբերություններով կապված կլիենտելայի (*clientelae*) ստվար զանգվածի ստեղծմանը: Միաժամանակ

ասալիանսարար ձևավորվեց մտերիմ անձանց այն նեղ շրջանակը (*pars Pompeiana*), որը Պոմպեոսի հուսալի հենարանն էր հետագա ողջ կյանքի ընթացքում:

Ք. ա. 70 թ. Գն. Պոմպեոսը միանգամից արժանացավ պետական բարձրագույն պաշտոնի՝ կոնսուլության (Ք. ա. 70 թ.): Այն նշանավորվեց խաղաղ ճանապարհով մինչևուլլայական սահմանադրության վերականգնմամբ: Սրան հաջորդեցին ևս երկու արտակարգ նշանակումներ՝ գլխավոր հրամանատարություն Միջերկրածովյան ծովահենների դեմ պատերազմում (Ք. ա. 67 թ., *lex Gabinia*), ապա մեծ իմպերիում (*imperium maius*)՝ անսահմանափակ իշխանություն Արևելքում (Ք. ա. 66 թ., *lex Manilia*)՝ Միերդատ Պոնտացու և Տիգրան II-ի դեմ:

Երկրորդ գլուխը՝ «Գնես Պոմպեոսն Արևելքում», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Իրադրությունը Մերձավոր Արևելքում Ք. ա. 90-60-ական թթ.», ներկայացված են նշյալ ժամանակահատվածում Մերձավոր Արևելքում կատարված տեղաշարժերը՝ պայմանավորված Պոնտոսի և Մեծ Հայքի աննախադեպ ռազմաքաղաքական ակտիվությամբ:

Ընդդիմ Միերդատ VI Եվպատորի (Ք. ա. 120-63 թթ.) ջանքերի՝ Փոքր Ասիայի հյուսիս-արևելքում հզորացավ Պոնտական թագավորությունը: Ք. ա. II դ. վերջին այն իր տիրապետությունը հաստատեց Սև ծովի ավազանում: Դրան հաջորդեց Փոքր Հայքի և Կողքիսի նվաճումը: Միերդատի հավակնությունները Փոքր Ասիայի արևմտյան շրջանների՝ Պափլագոնիայի, Գադաբիայի և, հատկապես, Կասպադովիայի նկատմամբ հանգեցրին Հռոմի հետ հարաբերությունների լարման, ապա՝ առճակատման:

Տիգրան II Մեծի օրոք (Ք. ա. 95-55 թթ.)՝ շնորհիվ արտաքին և ներքին համալիր ձեռնարկումների, Մեծ Հայքը վերածվեց Մերձավոր Արևելքի հզորագույն տերության: Ք. ա. 94 թ. Տիգրան II-ը գրավեց և Մեծ Հայքին կցեց Ծոփքը: Հայոց պետության արևմտյան սահմանը հասավ Եփրատին, որից այն կողմ Կասպադովիան էր:

Հավանաբար նույն Ք. ա. 94 թ., Միերդատ Եվպատորը և Տիգրան II-ը դաշինք կնքեցին, որն ամրապնդվեց հայոց արքայի և պոնտական արքայադստեր ամուսնությամբ: Դաշինքը պատկանում էր հելլենիստական դարաշրջանում տարածված «ընդհանուր օգուտով» պայմանավորված գործակցության տեսակին: Այն միաված էր կոնկրետ խնդրի՝ Կասպադովիայում հռոմեական ազդեցության չեզոքացմանը և չէր ենթադրում կողմերի համագործակցություն կամ փոխօգնություն այս խնդրից դուրս: Դաշնագրին հաջորդեցին Ք. ա. 93, 92 և 91 թթ. հայկական ներխուժումները Կասպադովիա:

Այս դեպքերից հետո Տիգրան II-ն այլևս չձանակեց Միերդատի հակահռոմեական գործողություններին: Միաժամանակ բույլ չէր տալիս հակապոնտական որևէ գործողություն: Նա փոխեց ծավալման ուղղությունը դեպի արևելք և հարավ: Ք. ա. 87-83 թթ. Տիգրան II-ի նվաճումների արդյունքում ձևավորվեց Հայոց տերությունը:

Աշխարհագրական առումով տերությունը պարառում էր երեք ոլորտ: Առաջինը տերության կորիզը կազմող բուն հայկական տարածքներն էին՝ Մեծ Հայքը: Երկրորդը ոչ հայկական այն տարածքներն էին, որոնք գտնվում էին Տիգրան II-ի անմիջական վերահսկողության կամ կառավարման ներքո՝ Կովկասյան լեռներից մինչև Եգիպտոսի սահմաններ, Միջերկրական ծովից մինչև Կասպից ծով: Տարբեր էր հպատակների իրավաքաղաքական կարգավիճակը՝ ենթակա թագավորություններ (Վիքք, Աղվանք, Ատրպատական, Կորդուք, Կամմագենե), հելլենիստական ինքնավար պոլիսներ (Անտիոք, Սելևկիա, Միդոն, Բիբրոս, Բերիտ, Արատ, Տյուրոս), հայոց վարչակազմով

կառավարվող երկրներ (Հյուսիսային Միջագետք, Ասորիք), ինքնավար ցեղեր և ցեղա-
յին միավորումներ (արաբներ): Երրորդ ոլորտը Արևելքի այն երկրներն էին, որոնք
գտնվում էին Տիգրանի գերակայության ներքո՝ մինչև Կենտրոնական Ասիա (թերևս
Հնդկաստանի սահմաններ) և Պարսից ծոց: Սա «հայոց խաղաղության» (*Pax
Armenica*) հիմնական բովանդակությունն էր: Տիգրան II-ի գաղափարական կենտրոնը
քայլեր էր ձեռնարկում տերությունն օրինականացնելու ուղղությամբ: Այն ներկայաց-
վում էր իբրև Արևելքի հինգերորդ գերտերությունը՝ Ասորեստանից, Մարաստանից,
Աքեմենյան Իրանից և Մելիկյան տերությունից հետո: Սրա ցուցիչն էր նաև պարսե
արքաներից վերցված «արքայից արքա» տիտղոսը:

Այլ ընթացք ունեցավ Պոնտոսի պատմությունը: Միհրդատի սևեռում
գաղափարը դարձավ հակահռոմեական պայքարը: Ք. ա. 80-ական թթ. նա արդեն
երկու անգամ պատերազմել էր Հռոմի դեմ (Առաջին և Երկրորդ միհրդատյան
պատերազմներ՝ Ք. ա. 88-85, 82-81 թթ.): Ք. ա. 74 թ. սկսվեց Երրորդ միհրդատյան
պատերազմը, որը շղթայական ներգործությամբ արմատապես փոխեց Արևելքում
ձևավորված իրադրությունը:

Հռոմեական Մենատը և Աշխարհաժողովը որոշում կայացրին Արևելք ուղարկել
մեծ բանակ՝ Լուկիոս Լիկինիոս Լուկուլլոսի հրամանատարությամբ: Կորցնելով ամեն
ինչ՝ Միհրդատը Ք. ա. 71 թ. ապաստանեց Մեծ Հայքում: Չարժանա-նարով
պաշտոնական ընդունելության՝ ասպրում էր արքունիքից հեռու:

Այնուամենայնիվ, Ք. ա. 69 թ. գարնանը, առանց հռոմեական Մենատի և
Աշխարհաժողովի լիազորման, Լուկուլլոսը ներխուժեց Մեծ Հայք, գրավեց և
կողոպտեց Տիգրանակերտը: Լուկուլլոսն ամեն կերպ ցույց էր տալիս, թե Տիգրանի
իշխանությունն Արևելքի նկատմամբ անօրինական է, թե ինքը վերականգնում է
խախտված կարգը: Նրա դեմ հայոց և պոնտաց գահակալները միավորեցին իրենց
ջանքերը: Ք. ա. 68 թ. Լուկուլլոսը ուղղություն վերցրեց դեպի Արտաշատ: Արածանի
գետի մոտ տեղի ունեցավ ռազմական խոշոր ընդհարում, որտեղ նա պարտություն
կրեց և լքեց Մեծ Հայքը: Միհրդատ Եվպատորը հայ զորաբանակի օգնությամբ ներ-
խուժեց Պոնտոս և վերականգնեց իր իշխանությունը: Միայն այդ ժամանակ Հռոմում
հասկացան դրության լրջությունը:

Երկրորդ ենթագլխում՝ «Պոմպեոսի Արևելյան արշավանքը», նախ
վերլուծության է ենթարկվում Ք. ա. 66 թ. Մանիլոսի օրենքով (*lex Manilia*)
Պոմպեոսին Արևելքում շնորհված իշխանության տարակերպը: Այն սահմանվում է
իբրև մեծ իշխանություն (*imperium maius*): Լինելով անսահմանափակ իշխանությամբ
օժտված զորահրամանատար՝ Պոմպեոսն իրավասու էր առանց Մենատի և
Աշխարհաժողովի նախնական համաձայնության՝ պատերազմներ վարելու,
դաշնագրեր կնքելու, հռոմեական ազգի բարեկամ կամ բշևամի ճանաչելու:

Ռազմական և դիվանագիտական ձեռնարկումներից հետո՝ Ք. ա. 66 թ.
ամռանը, Պոմպեոսը նախ իր հարվածն ուղղեց Միհրդատի դեմ: Պարտություններ
կրելով՝ պոնտական արքան մտադիր էր կրկին ապաստանել Մեծ Հայքում, սակայն
մերժում ստացավ Տիգրան II-ից: Շարժվեց դեպի Կողքիս, ապա՝ Բոսփոր, որտեղ և
ինքնասպան եղավ:

Պոմպեոսի առջև ծառայավ Մերձավոր Արևելքի «խաղաղեցման» դժվարին
գործը: Նա հանդգնեց էր, որ այդ նպատակով նախևառաջ պետք է լուծել Մեծ Հայքի
հիմնախնդիրը: Բայց նրա մոտեցումը միանգամայն տարբերվում էր Լուկուլլոսի մոտե-
ցումից: Պոմպեոսն ընդգծում էր Տիգրանի տերության օրինականությունը՝ շեշտելով,
որ Հռոմը նրանից է ժառանգում «Արևելքին տիրելու» իրավունքը: Սա իր արտահայ-

տությունը գտավ Ք. ա. 66 թ. կնքված Արտաշատի դաշնագրում: Դաշնագրի իրա-
վական, քաղաքական, ծիսասարարողակարգային բնութայունը հնարավորություն տվեց
սահմանելու Մեծ Հայքի և Հռոմի հարաբերությունների նոր ձևաչափը: Բնության է
ենթարկվում նաև տվյալ ժամանակաշրջանում հռոմեա-պարթևական և հայ-
պարթևական հարաբերությունների ընթացքը:

Արտաշատի դաշնագրով իրավականորեն ձևակերպվեց Արևելքի նկատմամբ
գերակայության անցումը Մեծ Հայքից Հռոմին: Մինչև Ք. ա. 63 թ. Պոմպեոսը զբաղ-
ված էր այդ գործընթացը *de iure* հարթությունից *de facto* հարթություն տեղափոխելու
նպատակով:

Երրորդ ենթագլխում՝ «Արևելքի կարգաբերումը», համակարգային
վերլուծության է ենթարկվում Արևելյան արշավանքների արդյունքում Հռոմի
գերակայության ներքո հայտնված տարածքների կազմակերպումը Պոմպեոսի
կողմից՝ ըստ մշակված վարչական, տնտեսական, գաղափարախոսական հղացքների:
Արդյունքում սկսեց հստակորեն ուրվագծվել Արևելքի աշխարհաքաղաքական նոր
համապատկերը: Դրանում կարելի է առանձնացնել երեք տարածաշրջան: Առաջինն
ընդգրկում էր «Կասպից ծովից և Կովկասյան լեռներից մինչև Եփրատ» ընկած
տարածքները՝ Մեծ Հայքը, Վիրքը, Ադվանքը և, ամենայն հավանականությամբ,
Ատրպատականը: Տարածաշրջանում Հռոմի ավագ գործընկերը Մեծ Հայքն էր:
Երկրորդը Եփրատից մինչև Եփրատոս ընկած տարածքներն էին: Ք. ա. 64 թ. Ասորիքը
վերածվեց հռոմեական Սիրիա պրովինցիայի: Հետևելով հռոմեական արտաքին
քաղաքական ավանդույթին՝ Պոմպեոսը նոր պրովինցիան շրջապատեց «հռոմեական
ազգի բարեկամ և դաշնակից» արաբական թագավորությունների և ցեղապետու-
թյունների համացանցով: Հյուսիսում կարևոր էին Էմեսան, Իթորեան և Ամանոսի
շրջանի ցեղապետությունը, Եփրատից արևելք՝ Օսրոնեն: Հռոմեացիների կարծիքով՝
դրանք ստեղծում էին ապահովության և կայունության «լրացուցիչ գոտի»:
Նորաստեղծ պրովինցիայից դեպի արևելք և հարավ ընկած տարածքները ևս ընդ-
գրկվեցին հռոմեական ռազմաքաղաքական ոլորտում: Նաբաթեան ընդունեց Հռոմի
գերակայությունը՝ ճանաչվելով «հռոմեական ազգի բարեկամ և դաշնակից»:
Համոնյան թագավորությունը դադարեց գոյություն ունենալ. Հուսան վերածվեց
կրոնապետության: Երրորդը Փոքր Ասիան էր: Այստեղ ևս Պոմպեոսի միջոցառումների
շնորհիվ համադրվեցին մի կողմից հռոմեական վարչակազմով կառավարվող
պրովինցիալ համակարգը, մյուս կողմից՝ «հռոմեական ազգի բարեկամ և դաշնակից»
նպատակ թագավորությունները: Պոմպեոսը ստեղծեց նոր պրովինցիա՝ Բուրանիա-
Պոնտոս: Այն ենթարկվեց վարչական բաժանման, որի հիմքը կազմեցին
պոլիտեյաները՝ քաղաքային ինքնավար կենտրոններ, որոնցից յուրաքանչյուրին
կցված էին հարակից գյուղական շրջանները: Բոլոր պոլիտեյաները ստացան
միատեսակ սահմանադրություն՝ *Lex Pompeia*: Այն ամենայն մանրամասնությամբ
սահմանում էր տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքները,
գործառույթները, համալրման կարգը: Պոմպեոսը վերակազմավորեց նաև Կիլիկիա
պրովինցիան, որն այժմ պարտեց և՛ Դաշտային, և՛ Լեռնային Կիլիկիան: Երկրորդ
քաղաքիչը «հռոմեական ազգի բարեկամ և դաշնակից» թագավորությունների և
իշխանապետությունների համակարգն էր: Կարևորներն էին Կողքիսը, Պափ-
լագոնիան, Գաղաթիան, Կապադովկիան, Կոմմագենեն: Ընդհանուր գծերով այսպի-
սին էր Պոմպեոսի ջանքերով Արևելքում ձևավորված *Pax Romana*-ի համապատկերը,
որը կանխագծեց Հռոմի արևելյան քաղաքականության սկզբունքներն առաջիկա մի
բանի հարյուրամյակներում: Այն տարասեռ հարաբերությունների միջավայր էր, որը
բացի իրավական, քաղաքական, տնտեսական չափումներից, ուներ մեկ այլ չափում

և: Վերոհիշյալ բոլոր էթնիկ-իշխանական և պետական միավորումները Պոմպեոսի հետ հաստատել էին նաև զուտ անձնական հարաբերություններ: Հռոմեացիները դրանք ընկալում էին իբրև պատրոնի և կլիենտի հարաբերություններ:

Երրորդ գլուխը՝ «Հանրապետական կարգի ճգնաժամը Զ. ա. 60-ական թթ. և Առաջին եռապետությունը», քաղկացած է երեք ենթագլխից: Բնություն է ենթարկվում Զ. ա. 60-ական թթ. Հանրապետության վերասերման գործընթացի հետագա խորացումը, որը հանգեցրեց հռոմեական ներհանրութենական՝ արդեն ավանդական դարձած հակասությունների ծայրաստիճան սրման: Նորիլիտետի վերնախավը՝ սենատական ընտրանին, վերջնականապես վերածվեց ներփակ և եսակենտրոն հանրախմբի՝ իր ուրույն շահերով և ձգտումներով: Իշխանությունը, նյութական և մշակութային բարիքները բաշխվում էին ընդամենը մի քանի տասնյակ տոհմերի միջև: Նման կառավարում ունեւ խմբիշխանության (օլիգարքիա) աներկբա բովանդակություն: Սակայն նորիլիտետի շրջանում առանձնանում էր մեկ այլ խումբ, որը համակված էր Հանրապետությունը բարենորոգումների ճանապարհով փրկելու գաղափարով:

Առաջին ենթագլխում՝ «Կատիլինայի դավադրությունը», ներկայացվում է Զ. ա. 66-62 թթ. Հռոմում ծավալված շարժումը, որ հայտնի է որպես «Կատիլինայի դավադրություն»: Լ. Ս. Կատիլինան Զ. ա. 66 թ. սկսեց քարոզչություն՝ հանդես գալով «բարենորոգիչների» ավանդական կարգախոսներով: Իր ծրագրերի իրագործման համար նպատակ ուներ հասնելու բարձրագույն պաշտոնի՝ կոնսուլության: Կատիլինայի շուրջը համախմբվեցին հռոմեական համակեցության ամենատարբեր խավերի ներկայացուցիչներ՝ նորիլիտե, գործարարներ, արհեստավորներ, երկրագործներ: Նրանց սկսեցին հարել հանցագործներ, անգամ՝ ստրուկներ: Այս տարասեռ զանգվածին միավորում էր այն, որ իր կենսական խնդիրների լուծումը նա չէր գտնում ավանդական Հանրապետության ծիրում: Այսպիսով, միմյանց դեմ կանգնեցին Հռոմի երկու *կլասի* տեսակակներ՝ Կատիլինայի շուրջ համախմբվածների միությունը և սենատական ընտրանու ներկայացրած Հանրապետությունը:

Ինչևէ, սենատական ընտրանին ձախողեց Կատիլինայի ծրագրերը: Կատիլինան հակվեց զենքով իշխանությունը գրավելու տարբերակին և հեռացավ Էտրուրիա, որտեղ կենտրոնացել էր նրա համախոհների զինված բանակը: Զ. ա. 63 թ. դեկտեմբերի 5-ին Սենատը Կիկերոնի առաջարկությամբ և Կատոն Կրտսերի խստագույն պահանջով որոշում կայացրեց՝ մահապատժի ենթարկել Կատիլինայի հինգ համախոհներին: Ոտնահարվեց հռոմեական քաղաքացու հիմնարար իրավունքներից մեկը՝ *ius appellationis*-ը: Համաձայն վերջինիս՝ ոչ ոք իրավունք չունեւ հռոմեացուն մահապատժի ենթարկել առանց դատարանի և Աշխարհաժողովի որոշման:

Կատիլինայի շարժման բախտն այլևս կանխորոշված էր: Զ. ա. 62 թ. հունվարի 5-ին Էտրուրիայում նա շրջապատվեց, տեղի ունեցած մարտում պարտություն կրեց և սպանվեց: Սենատը Կիկերոնին պատվեց *Հայրենիքի հայր (Pater Patriae)*, *Քաղաքի նոր հիմնադիր (alter conditor Urbi)* պատվանուններով:

Շարժումը շրջադարձային կետ էր հռոմեական ընդդիմության պատմության մեջ: Այն ցույց տվեց, որ սենատական ընտրանու գերակայության պայմաններում ավանդական (սահմանադրությամբ առաջնորդվող) բարենորոգչությունն այլևս անհեռանկար է: Եվ Կատիլինան ու իր համախոհները մշակեցին նոր ռազմավարություն՝ միավորված բոլոր մերժվածներից մի նոր հանրույթ ստեղծելուն և դա սենատական ընտրանուն հակադրելուն:

Այս հարացույցը հետագայում փորձեցին կյանքի կոչել ամենատարբեր ուղղության ընդդիմադիրներ, բայց առանց էական հաջողության: Պատմությունը ցույց տվեց,

որ Հանրապետությունը կարիք ունի ոչ թե կոշտ հակամարտության, այլ համախմբման նոր համակեցական գաղափարների շուրջ:

Երկրորդ ենթագլխում՝ «Նոր Հռոմի» հարացույցի մշակումը (Կիկերոն-Պոմպեոս համագործակցությունը), ներկայացվում է Պոմպեոսի «նոր ընտրությունը» հոգում «Նոր Հռոմի» հարացույցի: Զննական վերլուծության է ենթարկվում տվյալ հարացույցի տեսական մշակումը և գաղափարախոսական հիմնավորումը Կիկերոնի «Հանրապետության մասին» (*De Re Publica*) քննախոսությունում:

Զ. ա. 62 թ. սեպտեմբերին Պոմպեոսի վերադարձն Արևելքից նշանավորեց նրա գործունեության նոր շրջափուլի սկիզբը: Հակառակ համընդհանուր սպասելիքների՝ նա չկրկնեց Լ. Մուլլային: Փոխարենը Պոմպեոսն արձակեց բանակը և, ինչպես պահանջում էր հռոմեական սահմանադրությունը, ներկայացավ Հռոմ իբրև շարքային քաղաքացի՝ պատրաստ Սենատին և Աշխարհաժողովին հաշվետվություն ներկայացնելու Արևելքում իր գործունեության վերաբերյալ: Այսպիսով, Գ. Պոմպեոսը կատարեց իր «նոր ընտրությունը»՝ հրաժարում իշխանության բռնազավթման փակուղուց՝ ճգնաժամի հաղթահարումը կապելով մենիշխանության և հանրապետական կարգի իրավական և խաղաղ համադրության հետ: Սա «Նոր Հռոմի» հարացույցն էր, որի շուրջ ձևավորվեց Պոմպեոս-Կիկերոն համագործակցությունը: Այդու՝ Կիկերոնը ներկայացնում էր բանական (*prudential*), իսկ Պոմպեոսը՝ գործառնական (*gravitas*) իմաստունությունը: Այնուհետ էր հղումն առ Ս. Է. Ափրիկացու իմաստասիրական խմբակը, որտեղ Զ. ա. 130-ական թթ. ակտիվ քննարկվում էին Հռոմի ապագայի հիմնախնդիրները: Այն ձևավորվել էր երկու ականավոր անհատականությունների շուրջ՝ Ս. Ափրիկացի և Գ. Լեյլիոս: Խմբակն ընկալվում էր իբրև իդեալական հարաբերությունների միջավայր՝ ընդունակ մտահոգեր, բարոյական և գործողութենական ներգործությամբ բարեփոխելու շրջակա համակեցական միջավայրը: Խմբակի գործունեության արդյունքն էին Պանեցիոսի իմաստասիրական և Պոլիբիոսի պատմասիրական հայեցակարգերը:

«Իմաստասիրական խմբակ - հանրույթ» ստեղծագործական համադրությունը Կիկերոնի ներշնչմամբ դարձավ նաև Գ. Պոմպեոսի Հռոմի բարեփոխության ծրագրի կարևորագույն քաղաքիչներից: Զ. ա. 59-57 թթ. իր դեռատի կնոջ՝ Կեսարի դուստր Հուլիայի աջակցությամբ Պոմպեոսի Ալբանական դղյակում կազմակերպվեց հռոմեական բարձր մտավորականության մի խմբակ, որին մասնակցում էին հանրագիտակ Մ. Տ. Վարոնը, ճարտասան Ս. Լիբոն, պատմաբան Թեոփանես Միլեթացին, իմաստասեր Վ. Պիլոտոսը, գեղագետ-անդրիագործ Պասիտելեսը, ճարտարապետներ Մ. Կուլոնիոսը, Տ. Անտիփիլոսը, ժամանակի խոշորագույն բանաստեղծներ Կատուլոսը և Լուկրետիոսը: Կենտրոնական դեմքը Կիկերոնն էր՝ «նոր Լեյլիոսը»: Զ. ա. 54 թ. նա հրապարակեց իր «Հանրապետության մասին» (*De Re Publica*) քննախոսությունը, որում տեսական հիմնավորում էր ստանում իդեալական պետական այրի և հասարակական համակեցության բարձրագույն մակարդակի՝ հանրապետական կարգի (*Res publica*) համադրելիության գաղափարը:

Երրորդ ենթագլխում՝ «Առաջին եռապետությունը», քննության է ենթարկվում Զ. ա. 60-ական թթ. վերջին սենատական ընտրանու (Կատոն Կրտսեր) մերժողականության և հռոմեական պլեբսի առաջնորդների (Կրոդոս Պոպիլեո) սանձարձակության արդյունքում Գ. Պոմպեոսի քաղաքական մեկուսացումը: Սա հարկադրեց Պոմպեոսին ընտրել իր նպատակին հասնելու հանգրվանային ուղին՝ զիջումներ ընթացիկ հարցերում, առտնի խնդիրների լուծում՝ չնռանալով հիմնական նպատակի մասին: Նման զիջումներից էր Առաջին եռապետությունը՝ Հուլիոս Կեսարի և Մարկոս Կրասոսի հետ կազմած ոչ պաշտոնական համաձայնությունը: Դրա

Լուրջությամբ, բովանդակությամբ և պատմությունը մեկնաբանելիս պետք է մեկնարկել հռոմեական «գաշնություն» ավանդական հասկացությունից: Պոմպեոսի, Կրասոսի և Կեսարի Ք. ա. 60 թ. համաձայնությունը, ամենայն հավանականությամբ, «ասանմանափակ դաշնության» տարատեսակ էր: Նրանք միավորվում էին իրենց «սահմանափակ կանգնած ընկերային խավերի» համար կարևոր մի խումբ խնդիրների լուծման համար, որոնք սենատական վերնախավի բացարձակ գերակայության պայմաններում ցանկալի լուծում ստանալ չէին կարող: Այս ընդհանուր նպատակներից դուրս յուրաքանչյուրն ի գործ էր գործել ըստ իր հայեցողության և պատասխանատվության: Համադրելով իրենց ուժն ու ազդեցությունը՝ Ք. ա. 59 թ. եռապետերն ապահովեցին Կեսարի հաղթանակը կոնսուլական ընտրություններում: Կեսարը պաշտոնավարեց՝ ի կատար ածելով երեքի հրատապ նպատակները: Կրասոսը և Կեսարը նաև խնդիր ունեին ուժով և իշխանությամբ հավասարվելու Պոմպեոսին: Այդ գործում Կեսարն ավելի հաջողակ գտնվեց: Պաշտոնավարությունից հետո նա Գալլիայում հինգ տարով ստացավ ճիշտ այնպիսի իշխանություն, որպիսին Պոմպեոսն Արևելքում (*imperium maius*) բանակ հավաքագրելու, պատերազմներ վարելու և պայմանագրեր կնքելու՝ առանց Սենատի և Աշխարհաժողովի նախնական համաձայնության (*lex Vatinia de provincia Caesaris*):

Չորրորդ գլուխը՝ «Ճգնաժամի հաղթահարման Պոմպեոսի քայլերը Ք. ա. 50-ական թթ. (Պրինցիպատի նախափորձը)», բաղկացած է երեք ենթագլուխից:

Առաջին ենթագլխում՝ «Ճգնաժամի սաստկացումը», ներկայացված է Ք. ա. 50-ական թթ. Հռոմում ստեղծված իրավիճակը՝ պայմանավորված երիտասարդ քաղաքական գործիչների (Պ. Կլոդիոս Պուլխեր) ծայրահեղականությամբ, սենատական ընտրախավի (Կատոն Կրտսեր) անհեռատես պահպանողականությամբ և եռապետերի «դիտավորյալ անգործությամբ»: Ք. ա. 58 թ. Պ. Կլոդիոս Պուլխերն ընտրվեց ժողովրդական տրիբուն, և քաղաքում ծայր առան բռնություններ՝ ուղղված բոլոր նրանց դեմ, ովքեր համարվում էին այս նոր ուժի հակառակորդներ: Այդ շարքում հայտնվեցին ինչպես սենատական ընտրանու ներկայացուցիչները (Մ. Տ. Կիկերոն, Կատոն Կրտսեր), այնպես էլ եռապետերը, մասնավորապես՝ Պոմպեոսը: Վերջինս չարձագանքեց, փոխարենը թույլ տվեց, որպեսզի Կլոդիոսի բռնաճնշումների զսպանակը սեղմվի մինչև վերջ՝ հակառակ շարժման ակնկալությամբ: Այդպես էլ եղավ: Սարսափած ստեղծված իրավիճակից՝ սենատական ընտրանին սկսեց ավելի հանդուրժողական վերաբերել Պոմպեոսին և նրա ծրագրերին: Ք. ա. 57 թ. Կիկերոնի աջակցությամբ Աշխարհաժողովն ընդունեց օրենք՝ տալ նրան լիազորություններ Քաղաքը պարենով մատակարարելու համար (*lex Cornelia Caecilia de cura annonae*): Կրկին Պոմպեոսը ստանում էր նավատորմ և զորք հավաքագրելու, ֆինանսական միջոցները տնօրինելու և ինքնիշխան գործելու իրավունք: Եվ դարձյալ լիազորությունները տրվեցին հինգ տարով:

Պոմպեոսի և Սենատի հարաբերությունների թույլ ջերմացումը, հակառակ սպասումների, անմիջական շարունակություն չունեցավ: Ավելին, հաջորդ Ք. ա. 56 թ. *Եգիպտական խնդրի* առնչությամբ Պոմպեոսի հավակնությունների արդյունքում դրանք կրկին դարձան բշտամական: Ընտրանին վերսկսեց իր խաղը Կլոդիոսի և նրա համախոհների հետ: Պոմպեոսը կրկին մեկուսացվեց, կարծես վերադարձ կատարվեց դեպի 60-ականների վերջի իրադրությունը:

Դեպքերի այսօրինակ զարգացումը ձեռնառու էր ինչպես Կեսարին, այնպես էլ Կրասոսին, սակայն նրանք պատրաստ չէին իշխանության համար ինքնուրույն քայլերի: Ք. ա. 56 թ. Լուկայում կայացած ոչ պաշտոնական համընդհանուր ժամանակ եռապետերը վերահաստատեցին փոխադարձ վստահությունը և միմյանց օգնելու

պատրաստակամությունը: Որոշեցին, որ Կեսարի իրավասությունները Գալլիայում պետք է երկարաձգվեն ևս հինգ տարով: Նույնպիսի *imperium maius* պետք է ստանալին Պոմպեոսը՝ Իսպանիայում, իսկ Կրասոսը՝ Արևելքում: Այսպիսով, Պոմպեոսը հնչատությամբ «հրաժարվեց» Արևելքից, որտեղ հասել էր ռազմական և վարչական մեծագույն հաջողությունների: Ո՞րն էր պատճառը: Կարծում ենք, որ պատասխանը հարկ է փնտրել այն դասից, որը Պոմպեոսը քաղել էր *Եգիպտական խնդրի* արձարծումներից: Սենատը վախենում էր «Պոմպեոս և Արևելք» համադրության հեռանկարից, քանզի դրանում (ինչպես 60-ականների վերջին) տեսնում էր Մուլլայի սովերը: Եթե այս մտեցումը ճիշտ է, ապա ստացվում է, որ գնալով Եռապետության վերահաստատմանը, Պոմպեոսը չէր այրում բոլոր կամուրջները: Նա պատրաստ էր վերադառնալ Սենատի հետ հարաբերությունների կարգաբերմանը հանուն իր հեռահար նպատակի:

Երկրորդ ենթագլխում՝ «Պոմպեոսը՝ կոնսուլ առանց պաշտոնակցի (consul sine collega)», ներկայացվում է Ք. ա. 50-ական թթ. երկրորդ կեսին ճգնաժամի սաստկացման արդյունքում Հռոմում ծավալված քառսն ու անիշխանությունը: Իրադարձությունները դիտարկվում են ժամանակի երկու հարթություններում՝ առտնի և քաղաքակրթական: Առտնի ժամանակը ներկայանում է Ք. ա. 54 և 53 թթ. կոնսուլության համար ծավալված նախընտրական պայքարով, երբ գործի դրվեցին ապօրինի և անբարո բոլոր միջոցները՝ ընտրակաշառքից մինչև բռնաբարքներ, սահաբեկություն և սպանություններ: Հռոմում ճգնաժամը քառսային երանգավորում ստացավ: Ի լրումն սկսեց մղեցնել արհեստածին սովը և շուկայական գների աճը: Նման պայմաններում բնականոն ընտրություններն անհնարին էին: Սկսեցին կառավարել միջաբքաները: Հանգուցալուծումը ներկայացավ անսպասելի: Ք. ա. 52 թ. հունվարի 18-ին Հռոմից ոչ հեռու միմյանց հանդիպեցին Կլոդիոսի և Սիլոնի ավազակախմբերը: Տեղի ունեցավ արյունալի ընդհարում, որին գոհ գնաց Կլոդիոսը: Իր առաջնորդի դիակն ամբոխը բերեց Քաղաք և տեղադրեց Փորոնում: Ծայր առան աննախադեպ խժոժություններ: Երեք օր ու գիշեր Քաղաքը դարձավ կողոպուտի ու թալանի, ոճիրի ու սպանության միջավայր: Հուղարկվումն օրը ամբոխը հանգուցյալի դին տարավ Սենատ և կազմակերպեց դիակիզում՝ հոր ճարակ դարձնելով նրա հեռամեկի շենքը՝ *Curia Hostilia*-ն: Սենատորների հայացքի առջև վերջապես բացվեց այն վիճը, որի եզրով այսքան տարիներ ընթանում էր Հռոմը:

Պատճառն առտնի ըմբռումների և գործելակերպի փակուղին էր: Անհրաժեշտ էին արձատական հարցադրումներ ու լուծումներ՝ հիմնված քաղաքակրթական չափանիշների վրա: Եվ որքան էլ տարօրինակ հնչի, սենատական ընտրանու որոշ ներկայացուցիչներ միանգամից գիտակցեցին դա: Այս նոր մտայնությունը հանդես եկավ սահակացող քառսի հաղթահարման մի քանի հարացույցներով, ընդ որում՝ առանձնակի ճկունություն ցուցաբերեցին Սենատի ամենաանգիջում և արձատական թևի ներկայացուցիչները: Կատոն Կրտսերի և Մարկոս Բիբուլոսի նախաձեռնությամբ շրջանառության մեջ դրվեց որակապես նոր նախագիծ: Ըստ դրա էլ Ք. ա. 52 թ. հունվարի 25-ին Պոմպեոսն ընտրվեց *consul sine collega*: Թվում էր, թե գորավարն ու իր համախոհները ի վերջո հասել էին իրենց վաղեմի նպատակին. հաղթանակել է «նոր ընտրության» քաղաքականությունը՝ ճանապարհ հարթելով հանրապետության և միապետական կառավարման հավասարակշիռ համադրության համար: Թվում էր, թե նոր ձևավորվող համակենցական հարացույցն այլընտրանք և լուրջ հակառակորդներ չունի: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները՝ Պոմպեոսն ու իր շրջապատը ցանկալին ներկայացնում էին իբրև իրականություն:

Երրորդ ենթագլխում՝ «Հանրապետությունը պատմության խաչմերուկում», քննության է ենթարկվում «Պոմպեոս-Կեսար» հակամարտության խորքային բովան-

դակությունը: Սկզբնաղբյուրներում նկատելի է իրադարձությունների երկու տարբեր մեկնություններ: Համաձայն մեկի՝ ապագա քաղաքացիական պատերազմը հրահրվել է հավասարապես Կեսարի և Պոմպեոսի կողմից: Մյուսի համաձայն՝ նրանց դերակատարությունն ու պատասխանատվությունը իջեցվում են նվազագույն աստիճանի: շեշտվում է շրջակա միջավայրի ու հանգամանքների ազդեցությունը: Սակայն խնդրի մեկնությունն այս երկու հարացույցներով չի սպառվում: Պետք է հավելել ևս երկուսը: Առաջինը՝ շեշտելով Պոմպեոսի ջանքերով Հռոմում ստեղծված արդարության, ընկերային համաձայնության ու խաղաղության մթնոլորտը, դրանց խախտման պատասխանատվությունը (կամա թե ակամա) կապում է Կեսարի գործողությունների հետ: Երկրորդը, ընդհակառակը, մեկնաբնելով Կեսարի ոտնահարված իրավունքներից, մեղքն ամբողջովին բարդում է Պոմպեոսի վրա: Այս մտեցումներն, անտարակույս, պիտոմ են երկու ներհակ ճամբարներից: Արդի հետազոտողները սովորաբար պաշտպանում են վերոնիշյալ հարացույցներից մեկը կամ մյուսը: Ոմանք էլ աշխատում են դրանք համադրել՝ ստեղծելով իրադարձությունների ավելի ընդգրկուն պատկեր: Սակայն դրանից, մեր կարծիքով, քիչ բան է փոխվում. նրանք շարունակում են Հռոմի համար այս ճակատագրական անցքերը դիտարկել առանի հարաբերությունների ծիրում: Մինչդեռ անհրաժեշտ է դրանց քաղաքակրթական չափումը: Կարծում ենք՝ այս առումով կարևոր է հետևյալ հարցադրումը. ի՞նչ ազդեցություն ունեցան Կեսարի և Պոմպեոսի առաջադրած հարացույցները Հանրապետության հետագա բախտի դիտանկյունից: Անցնելով Կեսարի դիկտատուրայի և Քաղաքացիական պատերազմի միջով Օգոստոս Օկտավիանոսի օրոք Հռոմը հանգեց հանրապետական միապետությունը՝ պրինցիպատին: Այն ապահովեց Հռոմի, իբրև համաշխարհային տերության, կենսունակությունը շուրջ երեք հարյուրամյակ:

Եզրակացության մեջ, հանրագումարելով ստացված արդյունքները, ամրագրված են հետևյալ եզրահանգումները.

- Հռոմի վերածումը համաշխարհային տերության հակադարձ ազդեցությամբ պատճառ դարձավ Հռոմեական Հանրապետության խոր և արմատական կերպափոխությունների, որոնք պարառեցին համակեցական կյանքի բոլոր հարթակները՝ սասանելով դարեր ի վեր արմատացած քաղաքական, տնտեսական, ընկերային հավասարակշռությունը: Ծավալվեց խոր և համընդգրկուն ճգնաժամ: Բախվեցին տարաբնույթ հասարակական-քաղաքական ուժեր, որոնցից յուրաքանչյուրն առաջարկում էր դրա հաղթահարման իր ղեղատոմսը: Կատարվեցին բռնություններ, արյունահեղություններ, որոնք վերածվեցին հարյուրամյա քաղաքացիական պատերազմների (Ք. ա. 133-31 թթ.):

- Հանրապետական կարգի կերպափոխման կարևորագույն միտումներից մեկը «ուժեղ» անհատականությունների դերի ակտիվացումն էր: Հանդես գալով Հանրապետության վերականգնման կարգախոսներով և ներկայացնելով տարասեռ քաղաքական և ընկերային ուժեր՝ նրանք նախևառաջ հետաճում էին սեփական իշխանական շահերին: Այդ նպատակով օգտագործում էին հաղթանակած զորավարի փառքն ու հեղինակությունը, տոհմական-ընտանեկան կապերը, ներքին և արտաքին կլիենտելան: Ք. ա. I դարում գումարվեց ազդեցիկ մի գործոն ևս՝ արհեստավարժ բանակը, որը հանուն զորահրամանատարի պատրաստ էր գեներալ ուղղել անգամ ընդդեմ Հռոմի: Իշխանության բացարձականացման աղբյուրի էին վերածվել նաև ավանդական հանրապետական պաշտոնները, ավելի հաճախ՝ ժողովրդական տրիբունատը կամ դիկտատուրան: Դրանից հարցի էությունը չէր փոխվում. «ուժեղ» անհատականություններն իրենց դուրս էին դնում Հանրապետությունից: Նման վարքագիծը հույժ

հատկանշական էր նաև Գ.մ. Պոմպեոսի համար, որի ռազմաքաղաքական առաջընթացը, հեղինակությունը և փառքը աննախադեպ էին:

- Ք. ա. 66-63 թթ. Պոմպեոսի Արևելյան արշավանքի արդյունքում Հռոմի գերակայության ներքո հայտնվեց վիթխարի տարածք՝ Կովկասյան լեռներից մինչև Եգիպտոս, Կասպից ծովից մինչև Միջերկրածովը: Չևավորվեց կառավարման համընդգրկուն համակարգ (*Pax Romana*), որն առանց էական փոփոխությունների գոյատևեց հարյուրամյակներ: Այն տարասեռ միջազգային հարաբերությունների միջավայր էր՝ բարեկամական՝ Կովկասյան լեռներից մինչև Եփրատ, ենթարկվողական (պրովինցիա)՝ Ասորիք, համադրական (Փոքր Ասիա), բարեկամական-դաշնակցային՝ հարավ: Այս բոլոր հարթակներում Պոմպեոսը հաստատում էր նաև գուտ անձնական (կլիենտական) հարաբերություններ:

- Ք. ա. 60-50-ական թվականները նշանավորեցին Գ.մեոս Պոմպեոսի կյանքի և գործունեության նոր շրջափուլ: Ք. ա. 62 թ. նա Արևելքից ժամանեց Բուսիա: Հակառակ շատերի սպասելիքի՝ չհետևեց Սուլլայի օրինակին և հաղթական բանակի միջոցով չբռնագավթեց իշխանությունը: Նա կատարեց իր «նոր ընտրությունը», որը միտում ուներ ներդաշնակել մենիշխանությունը և հանրապետական կարգը:

Դա միանգամայն նոր հարացույց էր, որի շուրջ ձևավորվեց «Պոմպեոս-Կիկերոն» համագործակցությունը: Արդյունքն իմաստասերի «Հանրապետության մասին» (*De Re Publica*) քննախոսությունն էր, որտեղ տվյալ գաղափարը ստացավ համակողմանի տեսական հիմնավորում

- Ք. ա. 50-ական թթ. Գ.մեոս Պոմպեոսի գործունեությունն ու վարքագիծը բացահայտվում են ժամանակի առտնի և քաղաքակրթական հարթություններում: Բախվելով տարասեռ ուժերի դիմադրությանը՝ նա ընտրեց իր նպատակին հասնելու հանգրվանային ուղին՝ գնալ ժամանակավոր զիջումների՝ չնռանալով ռազմավարական կարևորագույն նպատակը:

Նման զիջումներից էր Առաջին եռապետությունը (Ք. ա. 60 թ.)՝ Գ.մ. Պոմպեոսի, Հ. Կեսարի և Մ. Կրաստի ոչ պաշտոնական դաշնությունը: Նրանց քիկունքին կանգնած էին բանակը, քաղաքային ամբոխը և ձեռներեցները: Միավորվեցին, որպեսզի վեր կանգնեն սենատական վերնախավից և ավանդական Հանրապետությունից: Յուրաքանչյուրը նպատակ ուներ իշխանության խնդիրը հետագայում լուծել հօգուտ իրեն:

Նպատակին ավելի մոտ էր Պոմպեոսը: Եռապետության մյուս անդամներն ամեն կերպ ձգտում էին ուժով և հեղինակությամբ հավասարվել նրան: Այս հարցում ավելի հաջող գտնվեց Հ. Կեսարը: Ք. ա. 58-49 թթ. նա Գալլիայի կառավարիչն էր և օգտագործելով իր արտակարգ լիազորությունները՝ ստեղծեց հավատարիմ բանակ, գրավեց հսկայական տարածքներ, ձեռք բերեց զորավարի փառք ու հարստություն: Սակայն ի տարբերություն Պոմպեոսի՝ նա չուներ Հռոմը վերակառուցելու հստակ ծրագիր: Գործում էր «ավանդական ձևով»՝ ոսկու և պաշտոնների բաշխման միջոցով Հռոմում ձևավորելով յուրայինների միջավայր:

- Ք. ա. 50-ական թվականների վերջն առանձնացավ Հռոմի ներքին հակասությունների սրմամբ: Վերասերման գործընթացը սկսեց տեղի տալ քառսի և անիշխանության: Դա առիպեց սենատական ընտրանուն ի վերջո վեր կանգնել հատվածապաշտությունից և առաջ քաշել քառսի հաղթահարման ուղիներ:

«Ամենահանրապետական» կեցվածքի սենատականներն անգամ սկսեցին հակվել «նոր Հռոմի» գաղափարին: Կատոն Կրոտերի և Մ. Բիբուլոսի առաջարկությամբ Ք. ա. 52 թ. Պոմպեոսն ընտրվեց *կոնսուլ առանց պաշտոնակցի (consul sine collega)*: Ստեղծվեց մի պաշտոն, որը Հանրապետության պատմության ընթացքում երբևէ չէր եղել: Այն կառավարման նոր համակարգ էր՝ «հանրապետական միապե-

տություն»։ Շատերը խոսում էին Պոմպեոսի թեկնածության օգտին՝ իբրև փաստարկ բերելով «նրա իշխանության օրինական և բարոյական հիմքերը»։ Հաճոքված էին, որ նրա անձի շուրջ հռոմեական համակեցությունը կվերագտնի իր միասնությունը։

Տասնամյա անողով ջանքերով՝ զսպվածությամբ և (երբեմն էլ՝ անկգրունքայնությամբ սահմանակցող) ճկունությամբ, Պոմպեոսը Ք. ա. 52 թ. հասավ իր նպատակին։ Իրական կերպարանք ստացավ Հանրապետության և մենիշխանության համադրելիությունը։ Մենք սա համարում ենք պրինցիպատի իրական նախադեպը։

- Պոմպեոսը համոզված էր, որ նոր ձևավորվող համակեցական կարգն այլընտրանք և լուրջ հակառակորդներ չունի, և ամիրաժեշտ քաղաքական կամք ու հետևողականություն չգրսևորեց սահմանադրորեն անբազրելու իր առանձնահատուկ *sine collega* կարգավիճակը։ Նա ժամկետից շուտ հրաժարվեց կոնսուլական իշխանությունից և սկսեց այն աստիճան հավատալ Հանրապետության խաղաղ «բժշկման» գաղափարին, որ այլևս լուրջ չէր վերաբերում *ուժի ու դիկտատուրայի* հաջողությանը։ Ավելին, այս մտայնությունը սկսեց վերագրել իշխանական մրցավազքի իր հիմնական ակոյսանին՝ Կեսարին։ Պոմպեոսի այս կեցվածքը մենք բնորոշում ենք որպես *սահմանադրական բռնամտիզմ*։ Դա էր այն հիմնական պատճառը, որ Ք. ա. 49 թ. սկսած քաղաքացիական պատերազմին նա միանգամայն անուպատրաստ գտնվեց ինչպես ռազմական, այնպես էլ հոգեբանական դիտանկյունից։ Ջոնվեց և քեց պատմության քատերաբեմը։

Ինչ վերաբերում է Կեսարին, ապա նա, ըստ էության, կրկնեց Կ. Սուլլայի ոտին։ Հաղթանակ տոնեց քաղաքացիական պատերազմում, դարձավ Հռոմի մենիշխան տիրակալը, սակայն հայտնվեց ռազմական դիկտատուրայի փակուղայնության առաջ. չափազանց գորեղ էին հանրապետական ավանդույթները։ Ք. ա. 44 թ. նա «հանրապետական դավադրության» գոհ դարձավ։

Հռոմը ներքաշվեց նոր քաղաքացիական պատերազմի հորձանուտի մեջ, որը տևեց շուրջ մեկուկես տասնամյակ (Ք. ա. 43-31 թթ.)՝ պատճառելով մարդկային և նյութական մեծագույն կորուստներ։ Ասպարեզից հեռացան ուժեղ անհատականությունները։ Մնաց Գայոս Հուլիոս Կեսար Օկտավիանոսը, որը դարձավ պրինցիպատի՝ *հանրապետական միապետության* հիմնադիրը (Ք. ա. 27 թ.)։ Օկտավիանոսի քարոզչությունը նրան ներկայացնում էր իբրև Աստվածային Կեսարի ժառանգորդը (*filius divi Caesari*), և բառիս ուղղակի իմաստով դա այդպես էր։ Սակայն *քաղաքակրթական գեների* առումով դժվար է ժխտել նրա խորագույն կապը Գ.ն. Պոմպեոսի հետ։

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

1. Մինասյան Լ., Հին Հռոմ. անցում հանրապետությունից պրինցիպատին (առաջին եռապետության փորձից), Կանթեղ, 22 (2005), էջ 104-112։
2. Մինասյան Լ., Գնեսո Պոմպեոսը և հանրապետական կարգի ճգնաժամը Հռոմում (քաղաքական իդեալ և իրականություն), Պատմություն և կրթություն, 1-2 (2005), էջ 55-68։
3. Մինասյան Լ., Պոմպեոսը և քաղաքական իրավիճակը Հռոմում Ք. ա. 54-51 թթ. (Consul sine collega – Պրինցիպատի նախավորձը), Պատմություն և կրթություն, 3-4 (2006), էջ 25-39։
4. Մինասյան, Լ., «Մեծ Հայք - Հռոմ» հարաբերությունների նոր ձևաչափը (Մի դիտողություն Արտաշատի դաշնագրի վերաբերյալ), Պատմության հարցեր, 1 (2009), էջ 94-101։

**ГНЕЙ ПОМПЕЙ: ВОЕННЫЙ И ГОСУДАРСТВЕННЫЙ ДЕЯТЕЛЬ
(К ИСТОРИИ ПАДЕНИЯ РИМСКОЙ РЕСПУБЛИКИ)**

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 "Всемирная история".

Защита состоится 5 декабря, 2011 г., на заседании специализированного совета 006, действующего при Институте Востоковедения НАН РА,
по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4.

Р Е З Ю М Е

Диссертационная работа представляет собой опыт исследования одной из основных проблем римской истории II-I вв. до н. э., в частности, кризиса республиканского строя и перехода Рима от традиционной республики к новому типу социального общежития - республиканской монархии, Принципату. Отдельные этапы этого сложного и многогранного процесса (кризис, борьба, реконструкция) имеют общеисторическое значение.

В указанной исторической эпохе прослеживаются две противоположные тенденции: с одной стороны вырождение республиканских устоев и ценностей, с другой - разработка концепций преодоления кризиса, "исцеления Республики". Выдающимся личностям, государственным, общественным и политическим деятелям предстояло методом проб и ошибок сконструировать историческую перспективу Рима. В 27 г. до н. э. поиски привели к новой парадигме общественно-политического строя, которую принято называть Принципатом. Одним из архитекторов Принципата мы считаем Гнея Помпея. Переосмысление его политического пути, раскрытие и исследование его роли в становлении Принципата является основной целью нашего исследования.

Данная цель предполагает решение следующих задач:

- подвергнуть системному и типологическому анализу метаморфозу структурообразующих компонентов римской традиционной общественной организации (*civitas*) во II-I вв. до н. э., повлекший за собой кризис и, в конечном счете, падение Римской Республики;
- проанализировать концепции преодоления кризиса, предлагаемые выдающимися государственными деятелями и их единомышленниками, рассмотреть попытки реализации этих программ и их последствия;
- рассмотреть основные этапы начальной политической карьеры Гн. Помпея (начало 80-60 гг. до н. э.) как совокупность чрезвычайных (экстраординарных) магистратур;
- рассмотреть Восточный поход Помпея (66-62 гг. до н. э.) как этап кульминации его славы, могущества и авторитета, исследовать структуру новой системы римского владчества (*Pax Romana*), сложившиеся на

Востоке вследствие его организационных и административных мероприятий;

- проанализировать сущность "нового выбора" Помпея в контексте 60-50 гг. до н. э.; дать всесторонний анализ теоретического и идеологического обоснования последнего в трактате М. Т. Цицерона "О Республике" (*De Re Publica*);

- рассмотреть Первый триумвират как временный союз трех влиятельных политических деятелей, Гн. Помпея, М. Красса и Ю. Цезаря, выявить цели каждого из участников;

- рассмотреть обострение кризиса в конце 50 гг. до н. э., подвергнуть сравнительному анализу концепции его преодоления, их правовые основы, рассмотреть единовременное консульство Помпея в 52 г. до н. э. (*consul sine collega*) как прецедент принципата;

- исследовать глубинные причины противоборства "Помпей-Цезарь", выявить их цивилизационную перспективу в становлении системы Принципата.

Методологическая база исследования сочетает традиционные историко-критический и историко-сравнительный методы, которые дали возможность выявить, обобщить и систематизировать обширный исследовательский материал. Междисциплинарный подход помог уточнить и адекватно разработать его отдельные смысловые поля (история-филология, история-политология, история-международные отношения, история-право и т.д.).

Работа состоит из Введения, четырех глав, которые подразделяются на параграфы, Заключение и Списка использованных первоисточников и научной литературы.

Во Введении обосновывается актуальность темы исследования, дается развернутый обзор использованных первоисточников и научной литературы.

В первой главе "Метаморфоза социального общежития в Риме (II-I вв. до н. э.)" рассматриваются изменения структурообразующих компонентов Римской Республики после Пунических войн и Великих завоеваний, которые привели к вырождению традиционной полисно-республиканской системы, породили разнообразные программы его преодоления (от Сципиона Африканского до Суллы). В этом историческом контексте рассматривается начальная карьера Гн. Помпея (80-60 гг. до н. э.).

Во второй главе "Гней Помпей на Востоке" анализируются существенные изменения политической обстановки на Ближнем Востоке в 90-60 гг. до н. э. обусловленные беспрецедентной военно-политической активностью Понтийского царства (Митридат VI Евпатор) и Великой Армении (Тигран II Великий), рассматривается Восточный поход Помпея (66-62 гг. до н. э.), делая упор на структуру новой системы римского владычества (*Pax Romana*), сложившиеся на Востоке вследствие организационных и административных мероприятий Помпея.

В третьей главе "Кризис республиканского строя в 60-х гг. до н. э., Первый триумвират" рассматривается политика Гн. Помпея после

возвращения с Восточного похода в сентябре 62 г. до н. э. Вопреки всеобщим ожиданиям он не повторил путь Л. К. Суллы, а распустил свое войско, явившись Рим как рядовой гражданин. Помпей сделал "новый выбор": отказ от тутика вооруженного захвата власти и преодоление кризиса путем сопоставления единовластия и республиканского строя. Эта была концепция "Нового Рима", в связи с которым установилось сотрудничество Гн. Помпея и М. Т. Цицерона. Помпей олицетворял полюс активного действия (*gravitas*), Цицерон - полюс разума (*prudencia*). Но "законопослушное" поведение Помпея привело к его политической изоляции в результате непримиримости сенатской элиты (Катон Младший) и разнузданного поведения лидеров римского плебса (Публий Клодий Пульхер). Это принудило Помпея выбрать постепенный путь осуществления своей цели. Он подразумевал уступки при решении текущих задач, на пути к конечной цели. Одной из таких уступок был Первый триумvirат - политический союз трех влиятельных деятелей - Гн. Помпея, М. Красса и Ю. Цезаря.

Четвертая глава "Шаги Помпея направленные на преодоление кризиса в 50-х гг. до н. э. (Предопыт принципата)" рассматривается обострение внутривластного кризиса в Риме, обусловленного экстремизмом молодых политических деятелей (Клодий Пульхер), недальновидным консерватизмом сенатской элиты (Катон Младший) и преднамеренным бездействием триумvirов. Как результат, в конце 50-х годов Рим оказался в бездне хаоса и анархии. Нужны были радикальные меры. Сенатская олигархия пошла на уступки: 25 января 52 г. до н. э. Помпей был выбран консулом без коллеги (*consul sine collega*). Это был беспрецедентный шаг. Помпей сосредоточил в своих руках несколько ординарных и экстраординарных магистратур, полномочия до тех пор не совместимые. Мы рассматриваем это как предопыт Принципата. В течение нескольких месяцев порядок в государстве был восстановлен. Казалось, Помпей и его единомышленники достигли своей конечной цели и новый порядок не имел альтернативы. Однако последний шаг - юридическое закрепление новой власти в римской конституции - так и не был совершен. В конце главы рассматриваются причины и версии постепенного личного, политического отчуждения и разрыва между Помпеем и Цезарем, который ознаменовал начало новой гражданской войны (49-45 г. до н. э.). Мы попытались ответить на следующий вопрос: какое значение имела деятельность этих государственных мужей с точки зрения исторической судьбы Рима. Ответ очевиден. Пройдя через Диктатуру Цезаря и очередную гражданскую войну, при Октавиане Августе Рим пришел к Принципату. Он обеспечил жизнедеятельность Римской державы еще на 300 лет. С точки зрения нашей интерпретации в этой сложной исторической трансформации Рима, наряду с Ю. Цезарем, конструктивная роль Гн. Помпея неоспорима.

В Заключении сопоставляются результаты исследования и резюмируются основные выводы.

GN. POMPEY. SOLDIER AND STATESMAN (ON HISTORY OF DECLINE OF ROMAN REPUBLIC)

The Dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "World History" 07.00.02.

The Defense of the Dissertation will take place at 13.30, on December 5, 2011, at the Meeting of Specialized Council 006 acting at the Institute of Oriental Studies of NAS RA
Address: 0019, Yerevan, av. Marshal Baghramyan, 24/4

SUMMARY

The dissertation presents an investigation into one of the main problems of Roman History of II-I cc. B.C., the crisis and decline of the republican order and the transition of Rome from a traditional republic to a new type of social coexistence, i.e. Republican Monarchy, the Principate. All periods of this difficult and multifaceted process (crisis, struggle and reconstruction) have got world historical meaning.

Two opposite tendencies are examined in the given epoch; on one side degeneration of republican principles and values, on the other side, elaboration crisis overcoming concepts, concepts of "recovery of the Republic". "Great individuals", state, public and political leaders had to construct historical perspectives of Rome by tests and mistakes. In 27s B.C. the searches brought to a new paradigm of social and political order which was used to be called the Principate. Gn. Pompey (Gnaeus Pompeius Magnus) is considered to be one of the architects of the Principate. Reconsideration of his political activity, interpretation and investigation of his role in establishing the Principate are the main objectives of our research.

The issue is supposed to deal with the following problems:

- to expose to a systematic and typological analysis of metamorphosis of pivotal components of Roman traditional social order (*civitas*) in II-I cc. B.C., followed by the crisis and, in the end, the fall of Roman Republic;
- to analyse concepts of overcoming crisis proposed by outstanding state leaders and their "parties", to examine the attempts of realisation of these programs and their consequences;
- to illuminate main points of Gn. Pompey's initial political career (the beginning of 80-60s B.C.) as a range of extreme (extraordinary) magistracy;
- to examine Pompey's Eastern campaign (66-62s B.C.) as a period of his glory, power and greatest authority, to outline the new system of Roman power (*Pax Romana*), formed in the East in consequence of his military and administrative activities.
- to analyse the essence of Pompey's "new choice" in 60-50s B.C., to sketch out the theoretical and ideological base of M.T. Cicero's tractise "On the Republic" (*De Re Publica*);
- to illuminate the First triumvirate as a temporal agreement of three influential political leaders (Caesar, Crassus, Pompey), to outline the objectives of each participant;

- to examine the crisis at the end of the 50s B.C., to expose to a analysis of the overcoming concepts, their legal foundation, to examine Pompey's sole consulate in 52s B.C. (*consul sine collega*) as a precedent of the Principate;

- to examine the basic reasons of "Pompey-Caesar" confrontation on the background of their role in establishing the Principate system.

Methodological basis of the investigation combines traditional critical and typological methods which helped to reveal and systemize the whole research material. Interdisciplinary approach helped to to specify and work out its paraticular semantic fields (history-philology, history-political science, history-international relations, history-law etc..).

The thesis has a traditional structure and consists of Introduction, four Chapters which are subdivided into subchapters, Conclusion and Bibliography.

The **Introduction** deals with the actuality of the theme and an extensive review of used primary and secondary sources.

The first chapter "**Metamorphosy of social coexistence in Rome (II-I B.C.)**" looks to the changes of Roman Republic after Punic wars and Great conquests which brought to degeneration traditional polis-republican system, caused various programs of its overcoming (from Scipio Africanus to Sulla). The initial career of Pompey is examined in the clue events of 80-60s B.C..

The second chapter "**Gn. Pompey in the East**" analyses basic changes of political situation in the Middle East in 90-60s B.C. as a result of unprecedented military-political activity of Pontic kingdom (Mithridates VI Eupator) and Great Armenia (Tigran II the Great); Pompey's Eastern campaign (66-62 B.C.) emphasising the structure of the new system of Roman order (*Pax Romana*), formed in the East in consequence of his administrative activities.

Gn. Pompey's policy after his Eastern campaign on September 62 B.C. is examined in the third chapter "**The Crisis of republican order in 60s B.C. The First Triumvirate**". Despite general expectations he did not repeat L.C.Sulla's experience but dismissed his army and arrived to Rome as an ordinary citizen. Pompey made a "new choice" of overcoming the crisis by combining his personal authority with republican order. That was the concept of *New Rome* resulted from the collaboration of Gn. Pompey and M.T.Cicero. Pompey embodied the pole of action (*gravitas*) and Cicero - the pole of intellect (*prudentia*).

But Pompey's law-abiding behavior brought to his political isolation in the result of senate ellipse irreconcilability and destructive behavior of roman plebs leaders. This made him choose gradual way to bring about his purpose. The First Triumviate, political coalition of three the most influential political leaders of Rome, Gn.Pompey, M.Crassus and J.Caesar, was the embodiment of this policy.

The fourth chapter "**Pompey's steps to overcoming the crisis in 50s B.C. (Principate's pre-experiment)**" presents the escalation of the crisis in Rome conditioned by extremism of young political leaders (Clodius Pulcher), with short-sighted conservatism of senate ellipse (Cato The Junior) and with premeditated inactivity of triumvirs. As a result, at the end of 50s B.C. Rome appeared in chaos and anarchy. Radical measures were needed. Senate oligarchy conceded and on January 25 in 52 B.C. Pompey was elected a consul without colleague (*consul sine collega*). It was an unprecedented step. Pompey concentrated

some ordinary and extraordinary magistracies in his hands. We examine that as a precedent of the Principate.

The order was restored during several months. Pompey and his followers seemed to have achieved their final goal and the new order did not have the alternative. However, the last step, the juridical formulation of the new authority was not achieved.

The last chapter touches upon the reasons of gradual personal and political rupture between Pompey and Caesar which marked the beginning of new Civil war. We tried to examine the significance of these political actors from point of view of historical perspective. The answer is evident. Going through Caesar's dictatorship and another Civil war, Rome came to the Principate. It provided vitality for Roman Empire for 300 years. From the point of view of our interpretation in this difficult historical transformation of Rome the constructive role of Pompey the Great is irrefutable.